

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

25.885


Պրոլետարներ բարձր յերկրների միացիւք

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Կ. Կ. Կ. Կ. ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ ՍԵՐԻԱ № 11

Վ. Ա. ՊՈՆՈՓԻԴԻՆ

# ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ

Թարգմանեց Ս. Ս.Թ.Ս.ՅՍ.Ն



Յ Ե Ր Ե Վ Ա Ն  
Տ Ր Ե Ս Տ Ի Ա Ռ Ա Զ Ի Ն Տ Պ Ա Ր Ա Ն  
1924

23.07.2013

25.8.85

334(22)  
7-82. սե

15 JAN 2010

Գրականությունը բոլոր յերկրների միացնէ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Կ. Կ. Կ. Կ. ԱԳԻՏ-ԲԱԺԻՆ ՍԵՐԻԱ № 11

300  
1564-700

Վ. Ա. ՊՈՆՈՓԻԳԻՆ



ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ

ԳՅՈՒՂՈՒՄ

1003  
12310

Թարգմանեց Ա. Ա.Թ.Ս.Ս.Ն

Յ Ե Ր Ե Վ Ա Ն  
Տ Ր Ե Ս Տ Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Պ Ա Ր Ա Ն  
1924

## ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ԳՑՈՒՂՈՒՄ

«ՄԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՅԺ Ե».

(Կոոպերացիայի լոգոնոգր):

«ՄԻ ՉԵՌՔԸ ԾԱՓ ՉԻ ՏՍԼ»:

(Ժողովրդական առած)

«Վոչ բոլոր ընկերներն են իրանք իրանց հաշիվ տալիս, քե հիմա ինչ հսկայական, անընդգրկելի նշանակություն է ձեռք բերում մեզ համար Ռուսաստանի կոոպերացիականը:

Յե՛վ վոչ բոլոր ընկերներն են իրանք իրանց հաշիվ տալիս, քե ի՛նչ յեղանակով կարելի կլինի գուժի բերել Ռուսաստանի կոոպերացումը»:

(Լեհին: Կոոպերացիայի մարին նրա վերջին հոգվածը):

Կոոպերատիվ շարժումն արդեն շատ ժամանակ է վոր սկսել է աճել-մեծանալ և թափանցել մեր յերկրի ամենահեռավոր անկյունները: «Կոոպերացիա» \*) բառը, վոր վերցրված է լատին լեզվից, վորն առաջ այնքան խորթ ու անհասկանալի յեր մեր գյուղացու համար, արդեն վաղուց է մատչելի դարձել նրա հասկացողությանը և դարձել նրա սրտին մոտ ու հարազատ:

Ամեն մի քիչ-շատ զարգացած գյուղացի այժմ ձեզ միանգամայն վորոշ պատասխան կտա, վոր կոոպերացիան դա այնպիսի մարդկանց միություն է, վորոնք միացել են մի ընդհանուր նպատակի համար, և իսկույն և յեթ ձեզ ցույց կտա իր շրջանում յեղող սպառողական, գյուղատնտեսական ընկերությունները, նպատատու—ինստիտուցիան ընկերությունները, կաթնային և կաթնամթերք-

\*) Համագործակցություն, միասին արած գործ: Թ.:

ներ շինող արտելները և գյուղի բնակիչների նման միութ-  
յունները:

Զնայած վոր գյուղի կոոպերատիվային կազմակեր-  
պությունները լրիվ և ճշգրիտ հաշիվ չի յեղել, բայց և  
այնպես նույնիսկ մոտավոր թվանշանները ցույց են տա-  
լիս, թե կոոպերատիվ շարժումը մինչև անգամ հեղափո-  
խությունից առաջ վորքան տարածված և յեղել մեր  
գյուղերում: Բավական և ասել, վոր 1916 թվականի վերջին  
Ռուսաստանում 6.132 գյուղատնտեսական ընկերություն-  
ներ կային, վորոնց կից 267 սպառողական խանութներ,  
93 վերահսկիչ անասնաբուծական կայաններ, 79 յուղ  
պատրաստող արտելներ, 50 վարկային և փոխատու-խը-  
նայողական ընկերություններ և 40 հացահատիկ ամբու-  
րող ընկերություններ: Բացի այդ, նույն ժամանակ 2.100  
գյուղատնտեսական ընկերակցություններ կային, վորոն-  
ցից մանավանդ աչքի ելին ընկնում յուղ պատրաստող  
արտելները. այսպես Արխանգելսկի, Վոլոգդայի, Վյատ-  
կայի, Կոստրոմայի, Նովգորոդի, Ուսնեցկի, Պերմի և  
Յարոսլավլի նահանգներում կային 540 արտելներ, Տոմ-  
սկի նահանգում 1.038 արտել, Սիբիրյան միության մեջ  
800-ից ավելի արտել, Ալթայյան միության մեջ 100-ից  
ավելի: Ամբողջ Սիբիրում պետք և հաշվել 2.000 արտե-  
լից վոչ պակաս: Ահա թե ինչպիսի ահագին զարգացում  
եր ստացել կոոպերացիան իր գոյության մի քսան-քսան-  
ունինգ տարվա միջ, և այդ միմիայն նրա շնորհիվ, վոր  
մեր գյուղացիությունը շատ լավ եր յուրացրել այն ժո-  
ղովրդական ճշմարտությունը, թե մի ձեռը ծափ չի տալ,  
և կոոպերացիայի հիմնական սկզբունքը, վոր ուժը միու-  
թյան մեջ և, և վոր գյուղի շահագործողները— «գելերի»,  
սպեկուլյանտների, ամբարդարների և խոջանների դեմ կա-  
րող են կռվել միմիայն կազմակերպված արտելը, ընկե-  
րությունը կամ հասարակության միացած ուժերը: Գյու-  
ղացիները վերջիվերջս հասկացան, վոր առանց կոոպերա-

տիվ կազմակերպությունների գյուղացիական անտեսու-  
թյան մեջ անհնարին և լուրջ բարեփոխություններ կա-  
տարել, անկարելի յե բարձրացնել իրանց բարեկեցու-  
թյունը: Գյուղացիությունը, ինչպես վոր տեսանք վերել  
բերված թվերից ստեղծել և հզոր գյուղատնտեսական կոո-  
պերացիա դեռ պատերազմից և հեղափոխությունից ա-  
ռաջ: Կոոպերացիայի մասին Սորհրդային իշխանության  
մի շարք դեկրետներ հրատարակելուց հետո կոոպերացիան  
դարձավ համաժողովրդական, իսկ քանի վոր կա ՆԵՊ-ը,  
Սորհրդային իշխանության այսպես կոչված անտեսական  
նոր քաղաքականությունը, վորը թույլ և տալիս ազատ  
առևտուր, նորից և յերեվան յեկել գյուղի համար ստի-  
պողական անհրաժեշտություն էլ ավելի ընդարձակելու  
կոոպերացիայի գործունեյությունը, վորպես սպեկուլ-  
յանտների դեմ կռվելու համար, այնպես էլ պատերազմի  
և հեղափոխության կործանած գյուղական անտեսությու-  
նը բարձրացնելու և վերականգնելու նպատակով: Միայն  
տեղական ինֆևագործունեյությունը, տեղական ինֆեո-  
զնությունը, ստեղծագործական միահամուռ, հավաքական  
աշխատանքը կողմեն գյուղացուն դուրս գալու այժմյան  
թշվառ դրությունից:

Ահա թե ինչու կոոպերացիայի գործն իմանալը գյու-  
ղի համար առանձին հետաքրքրություն և առանձին նշա-  
նակություն և ստանում ներկայումս:

**ԿՈՈՊԵՐԱՅԻՆՆԵՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՐ**

Հին ժամանակ, յերբ յերկաթուղիներ դեռ քիչ կա-  
լին, յերբ գյուղն ապրում եր բացառապես այն մթերք-  
ներով, վոր ինքն եր արտադրում և ստանում եր պարզ  
գյուղատնտեսությունից, յերբ գյուղացին դեռ տանու  
գործած շոր եր հագնում, ինքն եր իր համար մուշտակ  
ու մորթի պատրաստում, ինքն եր իր համար տրեխ գոր-  
ծում, ինքն եր շինում իր արտըն ու ցաքանը և իր հա-

մար համարյա թե վոշինչ չեր առնում, թեյ չեր խմում, ծխախոտ չեր ծխում, կանֆետի անուհն անգամ չեր լսել, գյուղի կյանքը պարզ էր, հողը բավական, փող աշխատելու համար քաղաք գնալ չկար, գյուղի պահանջներն էլ հո մի բան չեյին, վորովհետև գիրք ու լրագիր էլ չեյին կարդում, կարծելով թե յերկինքը վոր վորոտում է — Յեղիա Մարգարեն է յերկնքով իր կառքը շափ քցում:

Ժամանակը փոխվեց, գյուղի կյանքն էլ հետը, ապրուստը գծվարացավ, հարկավորվեց քաղաք գնալ աշխատանքի, գյուղացին սկսեց գիր սովորել, սկսեց շատ բան հասկանալ ու աշխարհիս բաներն ուրիշ կերպ տեսնել: Ել հնար չեղավ յոյա գնալ տանու գործած կտավով ու իր ձեռքով կորած քուրքով, հեակիներով ու տրեխներով: Հենց վոր դուրս յեկան ֆարրիկաներն ու գործարաններն իրանց ապրանքներով, էլ հիմարություն կլիներ ժամանակ կորցնելն ու տանն իրանց հարկավոր բաները շինելը, քանի վոր գործարանի պատրաստած ամեն բան ավելի էժան էր նստում, իսկ տանու ապրանքի վրա գործ դրած ժամանակը կարելի յեր գործ դնել ուրիշ բանի վրա և այնքան փող աշխատել, վոր ամեն մի հարկավոր բան կարելի լինի առնել: Իր շինած արտրի տեղ ավելի ձեռնաու և միշտ իր փողով գուլթան առնել ու արտը վարել, տանը գործած կտավի տեղ ավելի ձեռնաու էր վուշը ծախել ու շապկի համար չիթ առնել:

Գյուղն սկսեց անցնել հողն ոգտագործելու բարելավված յեղանակների, գյուղատնտեսությունը վարելու ավելի լավացրած ձևերի, մի տեղ վոր մի տարի մի բան էր ցանում, մյուս տարին մի ուրիշ բան սկսեց ցանել, սկսեց խոտ ցանել. գյուղացին սկսեց հասկանալ, վոր ավելի ձեռնաու է քիչ տեղ մշակել, բայց ավելի թանկարժեք հացահատիկ ու խոտ ցանել և նրանցից մեծ յեկամուս ստանալ: Գյուղը հասկացավ, վոր էլ առաջվա նման ապրուստ անել չի կարելի:

Կյանքը նոր ձեով առավ թե քաղաքում, թե գյուղում, իսկ դրա համեմատ գյուղի պահանջներն էլ փոխվեցին, շատերը կարգացող դարձան, գրքի և ուրիշ խելացի գրագմուրքների կարիք գգացվեց, ապրանքով ապրանք առնելն ու ծախելը վերացավ, փողը մեջտեղ յեկավ, գյուղացին սկսեց ամեն քան քաղաքում ու շուկաներում (բազարներում) առուծախս անել, գյուղում խանութներ բացվեցին, առեվտրականներ, գյուղացու տնտեսության արդյունքներն առնող-ամբարողներ դուրս յեկան: Առեվտրականներն աշխատում էյին իրանց ապրանքը վորքան կարելի յե թանգ ծախել գյուղացուն՝ իմանալով վոր նա բան չի հասկանում, իսկ գյուղացու աշխատանքի պտուղն առնող ամբարողարներն էլ աշխատում էյին ինչքան կարելի յե էժան առնել նրա տնտեսության արդյունքները: Գոյությունն առավ գյուղական վաշխառուն, վոր սկսեց յերկու կողմից պլոկել գյուղացուն:

Ամեն մի գյուղացի մեն մենակ ուշ շունենալով կովելու այդ շահագործման դեմ, կարողություն շունենալով և մշտապես փողի կարիք ունենալով ստիպված էր ապառիկ ապրանք վերցնել, բայց իր ապրանքը նրան անհարմար ժամանակ ծախել չնչին զնով. ապրանքը մինչեվ վոր գործարանից գյուղը հասներ, տասը մարդու ձեռքով էր անցնում, զինը մեկին յերկու յեր դառնում, իսկ գյուղացու տնտեսության արդյունքները — ձուն, հավը, յուղը, ցորենը, դարին մինչեվ գործածողին հասնելն անց էր կենում էլի միջի մարդկանց ձեռքով, վորոնք իրանց ոգուտը տանելով հասցնում էին գյուղացիներին ու քաղաքացիներին գինը մեկին յերկու դարձած: Այսպիսով գյուղացին ապրանքի ամբողջ արժեքը չեր ստանում, բայց իր գնած ապրանքի համար գործարանի արժեքից շատ ավելի մեծ գումար էր տալիս: Այդ բանն այնտեղ հասցրեց, վոր գյուղացին ագրատացավ, գերի դարձավ վաշխառվի ձեռքին, վոր քամում էր գյուղացու վերջին հյութը և նրան ստիպում,

վոր իր ճակատի քրտինքով պահել-պահպանի շնից շատ միջնորդներին, խոջաներին ու ամբարդարներին:

Մի ֆրանսիացի գրող այդ գրութիւնը համեմատում է մարդկանց այն շղթայի հետ, վոր հրդեհի ժամանակ իրար կողքի կանգնած՝ դուլերով ջուրը շտապ-շտապ ձեռքից-ձեռք են վազեցնում հրդեհը հանգցնելու համար: Պարզ է, վոր դուլը մի ձեռքից մյուսն անցնելուց ջրի մի մասը թափվում է և մինչեւ վերջին մարդուն է հասնում, դուլի մեջ շատ քիչ ջուր է մնացած լինում:

Յեթե գյուղացին վնչ միշտ էր հասկանում, թե ինչպիսի են իրան կողոպտում ամբարդարներն ու վաճառականները, բայց ելի գգում էր, վոր նրանք իր հաշվին են ապրում, բնական է վոր աշխատում էր այդ բանից ազատվել, թույլ չտալ վոր իրան խուզեն, ինչպես վոչխարն են խուզում գարնանն ու աշնանը, սկսեց ընկերութուններ ու միութուններ կազմել՝ հասկանալով, վոր միայն կոոպերացիան (միասին գործ անելն) է կարող նրան փրկել գյուղական սարդերի շահագործումից: Յերեւման յեկավ ինքնագործունեութունը, գյուղի լավագույն, ամբելի գարգացած մարդիկ հասկանալով, վոր թե ինքզինքն չոգնես, աստված անգամ չի ոգնիլ, սկսեցին սպառողական խանութներ բանալ, փոխատու-խնայողական ընկերութուններ կազմել, յուզ պատրաստող արտեղներ և ուրիշ կոոպերատիվ կազմակերպութուններ հիմնել: Ծովը կաթիլներից է գոյանում, — ասում է առածը, և ճիշտ վոր, ինչ վոր մեկը մենմենակ անելու կարողութուն չունենր, ընկերութունը, հասարակութունն արավորանից մի մանեթ, նրանից մի մանեթ. — և այնպիսի մի դուժար գոյացավ, վոր կարելի յեր գործ սկսել: Առաջ մենմենակ գյուղացուն վոչ վոք վոչ փող, վոչ ապառիկ ապրանք կտար, իսկ հիմա հասարակությանը, արտելին թե պետական բանկը, թե մասնավոր բանկերը, թե առանձին մար-

դէկ ուրախությամբ սկսեցին փող պարտք տալ առեւտրի համար՝ գրավ վերցնելով ընկերության ամբարած հացահատիկը, վուշը և գյուղատնտեսական մյուս մթերքները: Սկսեցին բացվել վարկալին ընկերութուններ. ել գյուղացուն հարկավոր չէր գնալ վաշխառվից փող պարտք առնել, հերիք էր վոր փոխատու-խնայողական կամ վարկային ընկերության անգամ գրվեր, և ձեռնտու պալմաններով, չնչին տոկոսով փող կվերցնէր: Գյուղացին նոր-նոր հասկացավ կոոպերացիայի նշանակութունը գյուղի համար:

Կասկածանքի, անվստահության յերկար ճանապարհն անցնելուց հետո միայն գյուղն սկսեց կոոպերատիվներ կազմել և դուրս գալ կապիտալի դեմ կովելու ուղիղ ճանապարհը, կապիտալի, վոր իր բոլ մեջ էր պահում գյուղական ամբողջ առեւտուրը:

**ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

Սպառողների ընկերութունների նպատակն է. 1) իրանց անդամներին հայթայթել գործածվող սմեն տեսակ իրեր, այլև անդամների անտեսության և գործի համար հարկավոր նյութեր, 2) անդամների խնայողությանը նըպաստել և 3) ուրիշ յեղանակներով նպաստել իրանց անդամների բարեկեցության բարելավումին և հոգեկան զարգացմանը: Ուրիշ խոսքով ասած, սպառողական ընկերութունները բա՛ում են մագաղիններ, խանութներ՝ իրանց անդամների վրա վաճառելու ալյուր կորկոս (կրուպա), շաքար, թեյ, ծխախոտ, նավթ, ձյութ, չիթ, մահուղ, փոսնաման և ապրուստի համար հարկավոր ուրիշ բաներ:

Բացի գրանից, ընկերության անդամների վրա այդ խանութներում ծախում են և մինչեւ անգամ փողը մաս-մաս տալու պայմանով արորներ ցաքաններ, ցանիշներ, թեղովներ (веляки), կարի մեքենաներ, կոշկակար-

ների, թամբագործների վրա կաշի, յեթե գյուղում այդ արհեստով պարապողներ կան, զարբիները վրա յերկաթ, մեխ, տեղական արհեստավորների վրա նրանց անհրաժեշտ գործիքներ:

Ամեն մի գյուղացի այս կամ այն ապրանքի, մթերքի կարիքն ունի, և թեպես նրանցից յուրաքանչյուրն առանձին առանձին վերցրած այնքան ել «չազ մուշտարի» չի, բայց վորովհետեւ գյուղացիները կազմում են մեր ժողովրդի գլխավոր հիմնական և ամենարագամարդ աարըը, ուստի բնական է, վոր ինչքան ել աղքատիկ լինի գյուղացիութեան տարեկան հասույթը, այնուամենայնիվ գյուղացիութեանն և Ռուսաստանի գլխավոր առնողն ու ծախողը: Խանութպանին ինչ ոգուտ, թե շաբաթը մի յերկու հարուստ գնորդներ մտնեն նրա խանութն ու ամեն մինը տաս-քսան արշին չիթ կամ մի տաս գրվանքա նավթ առնի, այնքան ել շատ խեր չի տեսնիլ դրանցից ուրիշ բան է, վոր որը մի քսան-յերեսուն գյուղացի մտնի խանութը և դրանցից ամեն մինը մի հինգ արշին չիթ առնի ու մի հինգ գրվանքա ել նավթ. դա արդեն ուրիշ հաշիվ է: Առաջին դեպքում նա շաբաթը մի 50 արշին չիթ կծախի արշինը 2 կոպեկ ոգտով ու կաշխատի մի ուրիւի, քսան գրվանքա նավթում ել կաշխատի մի 20 կոպեկ, և նրա մի շաբաթվա աշխատանքը կդառնա ընդամենը 1 ուրիւի 20 կոպեկ, իսկ գյուղացիների վրա այդ մի շաբաթում նա կծախի 900 արշին չիթ, 900 գրվանքա նավթ, չիթից կգազի 18 ուրիւի, նավթից ել 9 ուրիւի, այսինքն յերկուսից միասին 27 ուրիւի: Այ թե ինչ տարբերութեան կա գյուղացու և քաղաքացու առեւտրի մեջ. չե՞ վոր գյուղացիները քաղաքացիներից շատ-շատ են: Պարզ բան է, վեր Ռուսաստանի ամբողջ առեւտուրը գլխավորապես գյուղացիներով է լինում:

Բացի այդ, ամեն մի առեւտրական իմանալով, վոր գյուղացին ապրանք չի ճանաչում, միշտ աշխատել և ա-

մենահժան ու փթած ապրանքը գյուղացու վրա «սաղացներ»՝ ինչքան կարողացել է թանգ գնով, մինչդեռ մի քաղաքացու, մի հարուստ բուրժուալի, վոր լրագիր, ապրանքի ցուցակներ է կարգում, քաղաքներ է ման գալիս, իմանում է ապրանքի ու մթերքների գինն ու արժանիքը և կարող է թոփով ծախողից միանգամից շատ ապրանք առնել, այդպիսի մուշտարու աչքերը չի կարելի կապել ու փթած, անպետք, բազարի գնից թանգ ապրանք տալ:

«Թե չխաբես, բան չես ծախիլ», —ասում եր ամեն մի խանութպան, և նրա առուսուրը դրա վրա յեր հիմնված. շատ քիչ առեւտրական կար, վոր քիչ ու շատ բարեխղճաբար ու ազնվաբար եր առուսուր անում, այն ել միայն վերջին ժամանակներս, յերը մրցութեան առաջ յեկավ, յերը սկսեց գործել մեր կոտպերացիան: Գյուղացու մտքովն ել չեր անցնում, թե կարելի յե բանն ուրիշ տեսակ սարքել, թե կարելի յե այնպես անել, վոր շարժիներին, վաճառականներին, միջնորդներին տված սգուտը հենց գյուղացու գրպանումն ել մնա: Թվում եր, թե առանց վաշխառու-խոջայի, վորը գյուղացուն թե կանխիկ թե ապառիկ ապրանք եր բաց թողնում, իսկիլ չեր ել կարելի յոլա գնալ: Իսկ միյեվնույն ժամանակ այդ խոջաները հարստանում եյին, գյուղացու հաշվին մեծ կարողութեաններ եյին կիտում ու դրանցով հենց այդ գյուղացուց նրա գյուղատնտեսական բոլոր արդյունքներն առնում չնչին գնով, մանավանդ յերը գյուղացին իրանց պարտեր լինում:

Բայց անա գյուղացիներն սկսում են քիչ-քիչ հասկանալ, անաջ իրանց մեջ ապրող կրթված մարդկանցից, հետո լրագիրներից, գրքերից, վոր իրանց հաշվին են փող դիզում այդ ճարպիկները, վոր իրանց խաբում են, վոր կարելի յե դրա դեմ կովել, վոր բավական է գյուղացիները միանան ընկերութեան կազմեն, իրանց սպառողական խանութն ունենան, իրանց կոտպերատիվը հիմնեն,

— և գյուղացիութիւնը կազմավի գյուղական այդ սարգերից: Գյուղացիներն սկսում են հասկանալ, վոր իրանց ծանր դրութիւնից դուրս գալու միայն մի յեղք կա, — այն է՝ միացնել իրանց թույլ, ցրելի յեկած ուժերը, իրանց ձեռքն առնել առեւտուրը և իրանց ազատել աղքատութիւնից ու տնտեսանքութիւնից:

Սկսում են առաջ գալ սպառողական ընկերութիւններ առաջ քաղաքներում, հետո ել գյուղերում: Սկզբում միքանի ավելի զարգացած ու հասկացող գյուղացիներ փող են վեր գալիս, ամեն մինը 5—10 ուրբի, մի գատարկ տուն են բռնում, գյուղական ապրուստի համար ամենապետքական ապրանք առնում ու առեւտուրը ըսկըսում: Ապրանքն իրանց ձեռքով են առնում, մեծավաճառներից, ուրեմն ավելի եժան, ծախելուց ել քիչ հավելում են անում, վոր ապրանքի վրա արած ծախսերը դուրս բերեն ու մի քիչ ել ոգուտ մնա, վոր զնեն դրամագլխի վրա և առեւտուրը մեծացնեն: Ապրանքը ծախում են զլիսավորապես իրանց անդամներին, բայց ուրիշներին ել են ծախում, վոր առեւտուրը մեծ լինի և ծախսերը ծածկելը հեշտանա:

Գյուղացիները տեսնելով, վոր նոր բացված սպառողական խանութում ապրանքն ավելի լավ ու եժան է, իհարկի վաշխառու — խոջայի խանութը չեն գնում, այլ իրանցը. սկսում են ընկերութեան անդամ գրվել և այսպիսով գործն որեցոր առաջ է գնում ու ընդարձակվում: Գյուղացին իմանում է, վոր իր խանութում չի խարվիլ կտորը պակաս չեն չափիլ, պակաս չեն կշռիլ, փատ ապրանք ել չեն տալ:

Սպառողական ընկերութեան գործը կատարում են հենց իրանք գյուղացիները, ընկերութեան անդամները, հենց իրանք են ընկերութեան վարչութիւնը ընտրում, իրանք են գործակատար վարձում, իրանք են ապրանքն առնում: Ամեն ինչ անում են ամի-աշքարա, ամենքի աշ-

քի առաջ, ամեն մինը կարող է իմանալ, թե քանի է առնված ապրանքը, քանի է ծախվում և ինչու պետք է այդ գնով ծախվի:

Իհարկէ, գյուղացիները հենց այնպես հեշտ-հեշտ չեն առաջ տանում իրանց առեւտրական գործը: Հենց նույն վաշխառու — խոջաները, վորոնցից առաջ ապրանք ելին առնում, նրանց ասում են, թե հարկավոր չե վոր գյուղացիներն իրանց խանութն ունենան, վախեցնում են, թե իրանց ընտրած վարչութիւնն իրանց կքցի վնասի մեջ, պարտքի տակ կնկնի, նրանց տունը կքանդի, վորովհետեւ գյուղացիներն ստիպված կլինեն պարտքերը տալ և գառը — գատարկ նստել: Առուտուրականներն աշխատում են մրցել սպառողական նոր բացված խանութի հետ, իրանց ապրանքն ավելի եժան են ծախում, մինչեւ անգամ վնասով, միայն թե նոր խանութի պատիվը քցեն: Իհարկէ, բանը զլխի չնկած գյուղացիներն սկզբում հավատում են դրանց, վախենում են կոտորատիվի անդամ դառնալ, բայց յեթե վարչութեանն աջողակ է դուրս գալիս, գործակատարը լավ ու գործից հասկացող, այն ժամանակ շուտով գյուղացիները հասկանում են, թե ինչու ելին իրանց վախեցնում, և սկսում են ամեն բան իրանց կոտորատիվ խանութից առնել: Սպառողական ընկերութեան ժողովներին գնալով, գործի ինչպես գնալու մասին զեկուցումներ, բացատրութիւններ լսելով, գյուղացիներն սկսում են ավելի ու ավելի հասկանալ կոտորացիայի ոգուտը և սրեցոր ավելի սիրով են իրանց սպառողական ընկերութեան անդամ դառնում:

Բայց ինչպես են կազմվում սպառողական ընկերութիւնները: Ամենից առաջ, հենց վոր գյուղում սպառողական խանութ բանալ ցանկացողներ են դուրս գալիս, նրանք պետք է սպառողական ընկերութիւնների կանոնադրութիւնը ձարեն, և կանոնադրութեան հետ ծանոթանալուց՝ ընկերութեան հիմնադիրները, յեթե չհասկաց-

ված հարցեր կան, կարող են դիմել Շրջանային միության կամ Նահանգական միության հրահանգչական բաժնին և խնդրել, վոր իրանց համար մի հրահանգիչ ուղարկեն. այդ հրահանգիչն էլ կասի նրանց ու ամբողջ գյուղին, թե ինչպես է կազմվում սպառողական ընկերությունը, ինչ ոգուտ ունի նա գյուղացիների համար. նա կոգնի նրանց գրելու կանոնադրությունը, հիմնադիր ժողովի արձանագրությունը և ցույց կտա, թե կանոնադրությունը վորտեղ պետք է ուղարկել ցուցակագրելու համար, ընկերություն մեջ մտնելու համար ինչքան փող պետք է տա ամեն մի անդամ, թե ընկերություն ամեն մի անդամ ինչ պատասխանատվություն ունի ընկերություն պարտքերի վերաբերմամբ, վորովհետև ընկերություն իրավունք է արվում փող պարտք անել առեվտրական գործի համար, պայմանաթուղթ տալ ու առնել, ապառիկ ապրանք առնել, կայք առնել:

Յերբ կանոնադրությունը ցուցակագրված է լինում բոլոր անդամ—փայտերերը հավաքվում են, ընդհանուր ժողով անում և Վարչություն ընտրում, վճռում խանութի համար տեղ վարձելու հարցը, նշանակում, թե սկզբում գլխավորապես ինչ ապրանքներ պետք է առնել ու պահել խանութում, ծախու ապրանքի վրա ինչքան տոկոս ոգուտ պետք է քցել, այսինքն թե խանութն ինչ գնով է կարող ծախել ապրանքը, ինչ ոտճիկ պետք է տալ գործակատարին, խանութում ծառայողներին:

Այս բոլորը գրվում է արձանագրություն մեջ, վորն ստորագրում են ընկերություն բոլոր հավաքված անդամները, և դրանից հետո գործն անցնում է ընդհանուր ժողովի ընտրած Վարչության ձեռքը:

Անդամ—փայտերերի ընդհանուր ժողովի արած կարգադրությունների համաձայն՝ Վարչությունը գործը վարում է, այսինքն կառավարում է ընկերություն բոլոր առևտրական և ուրիշ գործերը, վարչությունը պահում

է ընկերության լիազորը և ինչքան վոր ընդհանուր ժողովը լիազորություններ (կատարյալ իրավունք) է տվել, այդ իրավունքով նա կարող է առուտուր անել, ապրանքներ առնել, պայման կապել, փող պարտ անել, հաշիվներ և ուրիշ թղթեր ստորագրել, ծախու ապրանքի գինը նշանակել, ծառայողներ վարձել և այլն:

Իհարկե, սկզբում Վարչության համար էլ հեշտ չի լինիլ գործը կառավարելը, վորովհետև գյուղացու համար, վորն առևտրական չի, այդ գործը նոր բան կլինի, իսկ վարչության անդամներն էլ սովորական գյուղացիներ են, փորձված չեն, դրա համար էլ վորպեսզի սխալներ չանեն, ընտրված Վարչությունը պետք է զնա մի մտաիկ ընկերության մոտ, վորն արդեն վաղուց է գործում, այնտեղ ծանոթանա ու սովորի թե ինչպես են այնտեղի գործերը պետք է դիմի նույնպես սպառողական ընկերությունների Շրջանային Միության հրահանգչական բաժնին, վորից մի առ ժամանակ ցուցմունքներ կստանա, թե ինչպես պիտի կառավարել: Իհարկե, ամենից կարևորն այն է, վոր գտնվի մի փորձված, ազնիվ և կոոպերատիվ գործին նվիրված գործակատար, վորովհետև գործի աջողությունը շատը նրանից է կախված, դրա համար էլ նոր ընկերությունը չպետք է խնայի նրան լավ ոտճիկ տալ, նրա աշխատանքը լավ վարձատրել: Հարկավոր է չմոռանալ, վոր փորձված և գործը հասկացող գործակատարը, ինչ ոտճիկ էլ վոր նշանակված լինի նրան, կկարողանա առևտրական գործն այնպես սարքել և առաջացնել, վոր ընկերությունը նրա ոտճիկը տալու համար շատ-շատ փող կունենա:

Ընկերության ոպերացիաների (գործերի) հաշվապահությունն ու հաշվետվությունը պետք է կատարվի ամենաբարեխիղճ կերպով և խնամքով, վորովհետև միայն հաշվապահության գործն ուղիղ կատարելով կարելի է կլինիլ սեղան ժամանակ և շուտ ստուգել խմանալ, թե գործն

ուղիղ և կատարվում, թե՛ վոչ, դրա համար ել պետք է հենց միանգամից առևտրական գրքեր պատրաստել և ուղիղ ու իր ժամանակին մեջն ամեն առուժախար գրել: Պետք է լավ իմանալ, վոր այդ գործը հասարակական է, վորի մեջ ամեն բան պետք է լինի ճիշտ, պարզ և ընկերության ամեն մի անդամի համար հասկանալի, և միմիայն գործն այդպես կատարելով և վոր ընկերությունը ձեռք կրերի անհրաժեշտ վստահություն (հավատ) վոչ միայն իր անդամների մեջ, այլև ամբողջ շրջանում, այն ժամանակ, յերբ վարչության համար միշտ պարզ է, թե այսինչ կամ այնինչ գործը ոգուտ և բերում, թե՛ վնաս այսինչ կամ այնինչ ապրանքն առնելը ձեռնատու է, թե՛ վոչ, վոր ապրանքն և շատ ծախվում, վոր դրանից միշտ պահի, և ինչ ապրանք չեն առնում, վոր այնուհետև ել բերել շտա:

Առուտուրը տաք գործ է, դրա համար ել վարչությունը պետք է լավ իմանա, թե վորտեղ ապրանքն ինչ գին ունի, վորտեղ կա ուղած ապրանքը, յերբ կա, յերբ է լավ ծախվում, վորտեղից է ձեռնատու առնելը, վոր բերել տալն և ժան նստի կայն. իսկ դրա համար վարչությունը պետք է լրագիր ել ստանա, ուրիշ թերթ ել ըստանա, վորի մեջ այդպիսի տեղեկություններ են լինում: Յեվ ամենից լավն է, վոր ապրանքը բերել տա իր Շրջանային կամ նահանգական միությունների միջոցով:

Տարին վերջանալուց վարչությունը պարտավոր է ընկերության առևտրական շրջանառության հաշիվը կազմել գրքերի յերեսով և ներկայացնել անդամների ընդհանուր ժողովին, ամենաքիչը տարին մի անգամ անպատճառ պետք է այդպիսի ընդհանուր ժողով լինի:

Ի նկատի ունենալով, վոր ամբողջ ընկերությունը, վորը յերբեմն 300—500 հոգուց է լինում բաղկացած, չի կարող մանրամասն քննել այդ հաշիվը և իմանալ, թե գործն ինչպես է սարքված ու ինչպես են առաջ տանում



դրա համար ել ընդհանուր ժողովն ել է մի քանի մարդուց կազմված վերաքննիչ հանձնաժողով, վորի վրա պարտականություն է դնում ստուգել (քննել) գրքերը, հաշիվները, խանութում մնացած ապրանքը և ընկերության գործերը: Բացի դրանից այդ վերաստուգիչ հանձնաժողովը հենց տարվա մեջ ել ուղած ժամանակ կարող է քննել խանութի ապրանքը, փողը և հաշիվները Այդ քննությունները շատ հարկավոր են նրա համար, վոր ինչպես վարչությունը, այնպես ել ծառայողները վորքան կարելի յե շուտ—շուտ ստուգվեն և բացի դրանից վոր ընկերության բոլոր անդամներն իր ժամանակին իմանան թե գործն ինչպես է, հաջող է, թե՛ անհաջող, ընկերության համար ոգուտ է, թե՛ վնաս, նույնպես ել թե՛ ծառայողները և թե՛ վարչության անդամները պետքակմն են, թե՛ վոչ:

016310  
1921

Վերաստուգիչ հանձնաժողովն իր կատարած քննության համար զեկուցում է (իմաց և տալիս) անդամների ընդհանուր ժողովին: Տարին վերջանալուց անդամների ընդհանուր ժողովը քննում է վարչության տված հաշիվը և լսում է վերաստուգիչ հանձնաժողովի զեկուցումը, և յեթե գործից ոգուտ է ստացվել, ընկերությունը բաժանում է այսպես. ոգտի մի մասը, ինչպես վորոշված է լինում կանոնադրության մեջ, ավելացնում են ընկերության պահեստի դրամագլխի վրա, մի մասը փայերի վրա, բայց տարեկան վեց տոկոսից վոչ ավել, մի մասն ել տալիս են անդամներին և ուրիշներին, վոր իրանցից ապրանք են առել. այդ ոգտից են տալիս ծառայողներին նվեր, նմանապես դրանից են հետ քցում և ուրիշ նպատակի համար առանձին դրամագլուխ կազմում:

Յեթե զուրս գա, վոր ընկերությունը վնաս է արել, այն ժամանակ այդ վնասը ծածկում են ընկերության պահեստի դրամագլխից, իսկ յեթե դա չի բավականաց-

նում, ծածկում են առեվտրի մեջ զործածվող (շրջանա-  
ռության) դրամագլխից:

Տարեկան հաշիվը հաստատելուց հետո ընդհանուր մո-  
ղովը քննում է յեկող տարվա նախահաշիվը, վոր առա-  
ջուց կազմած է լինում վարչությունը, ապա ընդհանուր  
ժողովը քննում է անդամների սված գանգատները, յեթե  
լինում են, ընտրում է նոր վարչություն և վերաստու-  
գիչ հանձնաժողով:

Գործը լավ գնալու համար սպառողական ընկերու-  
թյունը պետք է հետեւի այս գլխավոր կանոններին, 1) ընկերության գործերում ընկերության բոլոր անդամները պետք է հավասար իրավունքներ ունենան, 2) փայերը (մտցնելու փողը) չպետք է շատ նշանակել, վոր սղբատ-  
ներն էլ կարողանան անդամ դառնալ և անդամների թիվը վորքան կարելի յե շատ լինի, 3) ապրանքը միայն կան-  
խիկ (նաղդ) ծախել թե ընկերության անդամները վրա և թե վոչ-անդամները, և ամենքին էլ միյեվելույն գնով տալ, 4) ապրանքի գինը չափավոր նշանակել, շատ մեծ ողուտ ստանալու հետեւից չնկնել, բայց նստած գնով էլ չծու-  
լսել, 5) խանութի համար սպառիկ (նխիա) ապրանք չառնել, այլ կանխիկ, փողը չբավականալուց՝ յեթե շատ հարկավոր լինի՝ պարբառ անել, 6) ուղիղ հաշիվ պանել ու հաշիվ տալ, 7) ողուտը բաժանել վոչ թե փայերի համե-  
մատ, այլ տարվա ընթացքում ամեն մեկի վերցրած սղ-  
բանքի համեմատ 8) ծախել անյն ապրանքները միայն, վոր անհրաժեշտ են սպառողներին, 9) մշտապես անդամներ ըն-  
դունել, 10) վորքան կարելի յե շուտ շուտ ստուգել խանու-  
թի ապրանքն ու հաշիվները, 11) լցանութում միայն լավ ապրանք պահել՝ եժանության հետեւից չնկնելով, 12) ինչքան կարելի յե՝ իր Շրջանային, Նահանգական կամ Կենտրոնական միությունների միջոցով առնել ապրանքը, հիշելով, վոր միայն միությունն է ույժ և ուրեմն մի շարք սպառողական ընկերությունների կողմից մի զը-

նորդ (առնող) ավելի եժան և լավ ապրանք կառնի, քան թե ամեն մի ընկերություն առանձին-առանձին ու իրար հետ մրցելով, իրար վրա տալով:

Իմանալու համար թե այժմ ինչպես պետք է սպա-  
ռողական ընկերություններ կազմել, հարկավոր է իմա-  
նալ այն սրենքը, վոր դրա համար գրել է Սորհրդային Իշխանությունը:

1921 թվի ապրիլի 7-ին ժողովրդական Կոմիսարների Սորհուրդը վերացնելով սպառողական կոոպերացիայի մա-  
սին 1919 թվի մարտի 20-ին դրած սրենքը՝ նոր այսպես է վորոշել.

1) Սորհրդային Միության բոլոր քաղաքացիները \*) միանում, սպառողական ընկերություններ են կազմում: Մի տեղի բոլոր քաղաքացիները մի սպառողական ընկե-  
րության մեջ են մտնում: 2) Ամեն մի քաղաքում, գոր-  
ծարանում կամ գյուղում, ինչքան էլ մեծ լինի թե փո-  
քըր, մի սպառողական ընկերությունից ավելի չի կա-  
րող լինել, բայց մի սպառողական ընկերություն կարող է մի քանի տեղերի համար լինել (բազմախանութ կոոպե-  
րատիվ):

3) Մի սպառողական ընկերության սահմաններում թույլատրվում է, վոր քաղաքացիներն ավելի մանր յերկ-  
րային (տեղական) միություններ կամ միեմույն գործի տեր մարդկանց խմբեր կազմեն: Այդպիսի միությունները պարտավոր են ցուցակազրվել այն միասնական սպառո-  
ղական ընկերության վարչության մեջ, վորի շրջանում կազմակերպվել են:

Այդպիսի միությունների անդամ դառնալն ու անդա-  
մությունից հեռանալը կամավոր է: Մի քաղաքացի միյեվ-

\*) Քաղաքացի ասելով միայն քաղաքի բնակիչ չը պետք է կարծել, այլեւ գյուղի, մի խոսքով բոլոր մար-  
դիկ:

նույն ժամանակ մեկից ավելի սպառողական միության անդամ չի կարող լինել:

4) Բոլոր այդպիսի միություններն իրավունք ունեն իրանց շրջանի միասնական սպառողական ընկերության միջոցով ձեռք բերել ամեն տեսակ մթերք ու ապրանք՝ իրանց անդամներից լրացուցիչ վճար (փող կամ մթերք) առնելով ու վճարելով: Այդ ձեով ստացած նյութերը բաժանում են իրանց միության անդամների մեջ:

5) Սպառողական ընկերություններին իրավունք է տրվում փոխելու և գնելու գյուղատնտեսական արտադրությունների բոլոր ավելցուկը (ցորեն, գարի, գետնախնձոր, սոխ յեվայն), նույնպես և՛ տնական գործվածքներ ու արհեստավորների շինած բաներ ծախելու: Այսպես, կոոպերատիվ կազմակերպություններին իրավունք է տրվում մեծ քանակությամբ առնելու գյուղի և քաղաքի ինք նուրույն արտադրողներից (սեփական բան պատրաստողներից), իրանց տանը գործ անողներից (տնայնագործներից), արհեստավորներից ու կոոպերատիվներից նրանց պատրաստածները, ամեն մի արտադրողի, արտադրողների խմբի կամ կոոպերատիվների հետ ամեն տեսակ այնպիսի պայմաններ կապելով, վորոնք հսկառակ չեն խորհրդային որենքներից, որինակ—այդ նյութերն առաջուց առնել, մատակարարել, վերամշակել (ուրիշ բան կամ ուրիշ կերպ պատրաստել), պահպանել մաքրել, քաղել, գործիքներ ու նյութեր տալ պատրաստողներին և այդպիսի պայմաններով այս կամ այն պարտականությունը վերցնել իրանց վրա:

6) Սպառողական ընկերություններն իրավունք ունեն ձեռնարկություններ (գործ) կազմակերպել բերքեր ստանալու և մշակելու (բան պատրաստելու), նույնպես և՛ բանջարանոցներ (բաղչաներ, բոստաններ), կաթնատնտեսական ազարակներ (բինաներ) և այդպիսի ուրիշ ձեռնարկություններ ունենալ, կատարել կամավոր սպառու-

ղական միությունների, հիմնարկությունների և մասնավոր մարդկանց հանձնարարությունները (պատվերները) մթերքներ մատակարարելու, պատրաստելու և բաշխելու (ամեն մեկին իրան հասնելիքը տալու) վերաբերմամբ:

7) Կառավարությունն սպառողական ընկերությունների վրա հետեվյալ պարտականություններն է դնում.

ա) կատարել պարենավորման (մթերք մատակարարող) մարմինների պարտադիր առաջարկները գործարանային և տնայնագործական ապրանքներ առնել-պատրաստելու և գյուղատնտեսական մթերքների հետ փոխելու.

բ) լերկրում տարածել պարենային և շատ գործածվող այն բոլոր առարկաները, վոր պատրաստում է պետությունը (կառավարությունը) և ստացվում է ազգայնացրած գործարաններից, կոնցեսսիան (առանձին իրավունք ստացած) ձեռնարկություններից կամ բերված է արտասահմանից:

8) Ազգաբնակչությանը կառավարության տված պարենային և շատ գործածվող մթերքները կարող են բաշխվել (բաժանվել) ազգաբնակչությանը միմիայն ըստ սպառողական կոոպերացիայի միջոցով:

Փաճորություն: Այս կանոններից բացառություն անելը թույլ է տրվում ժողկուլտորի և Աշխատանքի Պաշտպանության նորհույի վորոշումներով:

9) Սպառողական ընկերություններին և նրանց միություններին իրավունք է տրվում իրանց անդամներից առնել անդամավճարներ, փայավճարներ և կանխավճարներ. վճարել կարելի չէ թե՛ փողով, թե՛ մթերքով:

Փաճորություն: Այն ընկերություններում, վորտեղ անդամավճար տալու սովորություն կա, ազգաբնակչության ամենաաղքատ խմբերին պետք է առանձին կանոններով հրահարավորություն տալ մասնակցելու սպառողական ընկերություններին:

10) Միասնական սպառողական ընկերության պլուխ է կանգնում վարչությունը յերեք հոգուց վոչ պակաս

կազմով և հսկիչ-ստուգիչ մի մարմին, վորին ընտրում և անդամների ընդհանուր ժողովը: Սպառողական ընկերությունների վարչական և հսկողական բոլոր մարմինների համար ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն բոլոր քաղաքացիները, բացի նրանցից, վորոնք Խորհրդային Միության սահմանադրության համաձայն զրկված են ընտրողական իրավունքից:

11) Միասնական սպառողական ընկերությունները միանում կազմում են նահանգական միություններ: Միության վարչությանն ընտրում և միության մեջ մասնակցողական ընկերությունների լիազորների ժողովը: Սպառողական կոոպերացիայի համամիությունյան միությունը կենտրոնական Միությունն և (Յենարսոյուզ): կենտրոնական Միության վարչությունն ընտրում են միության լիազորներն առանձին հրահանգի համաձայն:

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ**

Գյուլյասնեստական ընկերությունների նպատակն է ա) իր անդամների միացյալ ուժերով նպաստել, վոր գյուղատնտեսությունն ու գյուղական արդյունաբերությունը զարգանան ու կատարելագործվեն. բ) գյուղատնտեսական առարկաներ (գործիքներ, մեքենաներ, սերմեր, անասուն յեվային) առնել պատրաստելը կազմակերպել. գ) տնտեսության բերքերը մշակել. դ) գյուղատնտեսական արտադրությունների վաճառումը («սաղացանելը») կազմակերպել և նրանց հատկությունները բարելավել (լավացնել):

1905 թվի հեղափոխությունից սկսած գյուղացիները կարծես դարձնեցին յերկար քնից և ցնցված կյանքից, նրանց համար նոր մտքերի ազդեցության տակ նրանք սկսեցին ղկատել և հասկանալ գյուղական կյանքի բոլոր պակաս-պլատոր, տեսնել ու զլխի ընկնել իրանց հետամնա-

ցությունը. գյուղացիական աշխարհահայացքը (ամեն բանի մասին հասկացողությունը) և հավատալ, վոր իբր ամեն հին բան հաստատապես լավ է, սկսեց անհետանալ և մեր գյուղացիությունն սկսեց նոր մտքերին ու գաղափարներին մտիկ տալ և ոչ դարձնել:

Ձգտում յերեվաց իրանց դրությունը լավացնելու, իրանց տնտեսությունը կատարելագործելու, հարելան կրթված տնտեսությունների, գյուղատնտեսների և ուրիշ փորձված ու հասկացող մարդկանց փորձից ոգավելու:

Սոս ցանելը քանի գնաց—շատացավ, արորը շուտով գուլթանի փոխվեց, տանու շինած փայտե ցաքանը յերկաթե դարձավ, սերզատը ( սերը կաթից բաժանող մեքենա, սեպարատը) դուրս յեկավ, դրա հետ յուլ ու պանիր շինելը, սկսեցին հողին կարողություն տալ (պարարտացնել, շաղացնել) հանքերով յեվային:

Գյուղացին զգաց, թե ինչ գժվար է համայնքում, տգետներով շրջապատված, ձեռ քաշել հույց մնացած տնտեսական կարգերից, և ով վոր ավելի կրթված, ջահել ու համարձակ եր, սկսեց դուրս գալ գնալ շններն ու «խամհամները» (անտառից մաքրած տեղերը), վոր տեսնի թե կարող է ինքնագլուխ տնտեսություն անել, թե՛ չէ: Բայց համայնքից դուրս գալով նա զգում է, վոր մենմենակ նա բան չի կարող անել ու ձեռը բան չի ընկնիլ: Մենակ, առանց ուրիշների ոգնության զուլս դուրս բերելու հնար չունի: Տնտեսությունը նոր յեղանակով վարելու, նոր գործիքները գործածելու, նոր սերմեր ցանելու համար զիտություն է պետք, փող է պետք և հարկավոր է իմանալ, թե վորտեղից ինչ է կտրելի ստանալ, վորտեղ և յերբ է կարելի ծախել, վորովհետեւ քանի դեռ գյուղացին ստաշվա նման չընչին գնով կծախի այն բոլորն, ի՛նչ վոր ձեռք է բերել իր ճակատի քրտինքով, և ամեն բան, ինչ վոր պետք է տնտեսությանը, թանգ կանի, — վոչմի բարելավում չի կարելի սպասել:

Ընդհանրապես գյուղատնտեսութիւնն այնքան էլ հեշտ բան չի, իսկ յերբ հարկավոր ե տակից մինչեւ գլուխ քանդել ու շինել, փոխել, նորից շինել, նա էլ ավելի յե դժվարանում:

«Գյուղը վոր կանգնի — գերան կկտորի», — ասում ե մեր առածը. և գյուղացին այդ ճշմարիտ խոսքին հետեւելով սկսում ե իր մտքի տեր ընկերներ ճարել: Սկսում են գրուցել, խոսել, միտքները պարզվում ե և հասկանում են, վոր այս կամ այն նպատակին հասնելու համար միայն միանալով ե կարելի լավ հետեւանքներ ստանալ գրուցելով ու խորհուրդ հարցնելով ավելի զարգացած ու կրթված մարդկանցից, վորոնք գյուղացու լաջն են ուղում. մյուսներից ավելի հասկացող գյուղացիների խմբերը գալիս են այն յեզրակացութեան (մտքին), թե բոլոր բաժան-բաժան յեղած տնտեսութիւնները, վոր ջոկ-ջոկ թույլ են, միայն միանալով են կարող դառնալ ինքնուրույն (իրանց գլխու) և ուժեղ, ե վոր միայն միութեան մեջն ե ույժը:

Յեւ ճիշտ վոր, յեթե մի գյուղացի գյուղատնտեսութեան մասին գիտե մի բան, մյուսն էլ գիտե մի ուրիշ բան, մի յերրորդն էլ մի նոր բան, այն ժամանակ նրանք միասին հավաքվելով ու գլուխ գլխի տալով նրանցից ամեն մեկը յերեք անգամ բան կիմանա, քան առաջ գիտեր: Յեթե ամեն մեկն առանձին կարողութիւնն չուներ ցանիչ, թեղոլի, կամն առնելու, միասին լինելով բանը հեշտացավ, իսկ միասին առած մեքենաներով վարելն ու ցանելն այնպես հեշտ ու արագ եր կատարվում, վոր փոխանակ ամեն մեկն առանձին յերկար ժամանակ կորցնելու և ձեռքով վարուցանք անելու, միյեւնույն մեքենայով կարճ ժամանակում կարող եյին հեշտ կերպով կատարել այդ աշխատանքը: Յեթե մեկը մինակ կարողութիւնն չուներ գիրք, լրագիր կամ թերթ առնելու և բերել տալու, այդ ժամանակ ամեն մեկը քիչ փող վեր գալով

ամեն մի խելքը գլխին տնտեսին գիտութիւնն ստանալու ամեն հարկավոր միջոց ունենալը հեշտացավ: Յեթե մի տնտեսութեան համար մի գյուղատնտես չի գնալ գրույց անել գյուղատնտեսական զանազան հարցերի մասին, փորձեր չի անիլ գյուղատնտեսութիւնը բարելավելու համար, ցուցադաշտեր չի կազմակերպիլ, լավ սերմեր չի բերել տալ, հող չի լավացնիլ, մի խումբ գյուղացի-տնտեսների համար ամենմի գյուղատնտես կամ մասանգետ կգնա ու այդ բանը կանի:

Յերբ մի հողագործի կարելի յե պարագ տալ մի 20 ուրբու, մի խումբ գյուղացիների, մանավանդ յեթե դրանց մի մասը բավական կարողութեան տեր ե, կարելի յե շատ ավելի մեծ գումար տալ, կարելի յե բաց թողնել սերմ, գյուղատնտեսական գործիքներ յեվայն:

Յեթե մի գյուղացի շուկա (բազար) ե տանում կամ մի միջնորդ առնողի վրա տունը ծախում ե հացահատիկ կամ գյուղատնտեսական ուրիշ արդուներ, նա դրանց գինն էլ լավ չի կիմանում, իսկ ավելի մեծ քանակով առնողի վրա չի էլ կարելի մի քիչ բանը ծախել. իսկի նա էլ չի առնիլ, բայց յեթե մի խումբ գյուղացիներ իրանց ցորենը կամ ուրիշ արդուները ծախելու համար վորոշված տեղը կհավաքեն, այն ժամանակ առանց միջնորդ — առնողների էլ նրանք կարող են առաջարկել իրանց ապրանքը և պայմանավորվել մեծ քանակութեամբ առնողի, կառավարական ու հասարակական հաստատութիւնների հետ:

Այսպես դատողութիւնն անելով և գալով այն մտքին, վոր միայն միատեղ, միասին ե կարելի մեծ հաջողութեամբ անել ամեն մի գործ, գյուղացիներն սկսեցին միանալ ու կազմել գյուղատնտեսական ընկերութիւններ: Այդպիսի ընկերութիւնն իր անդամների ընդհանուր ժողովներ ե անում, վորտեղ քննութեան ե յեթարկում իր բոլոր տնտեսական կարիքներն ու տնտեսութիւնների պա-

հանջները, բանում են գրադարաններ, ընթերցարաններ, կազմակերպում են հասարակութայն համար ընթերցանություն ու գրույցներ գյուղատնտեսութայն գանազան ճյուղերի վերաբերյալ, կազմում են փորձնական և ցուցական դաշտեր, պտղատու ծառերի տնկարան—այգիներ, ցուցական բանջարանոցներ, իրանց անդամների մեջ տարածում են յերկրագործական մեքենաներ ու գործիքներ, ընտրովի սերմեր արհեստական պարարտանյութեր, կազմակերպում են գյուղատնտեսական ցուցահանդեսներ, բաց են անում յերկրագործական գործիքների, սերմերի, կտորները շինելու թիթեղի պահեստներ եժան գնով ծախելու համար, վերջապես գյուղացիական տնտեսութայն արդյունքները ծախելու համար հոգացողություն են անում գանազան տեղեր հացահատիկների ամբարներ, վուշ, կանեփ, խոտ, ձու հավաքելու տեղեր հաստատելով, խոտը կապելու (մամլելու) տեղեր են շինում յեժ այլն:

Վերջապես բաց ե անում վարկային (փող պարտք տվող) ընկերություններ և սպառողական խանութներ:

Ահա թե ինչեր ե անում գյուղատնտեսական ընկերությունը:

Բացի դրանից, գյուղատնտեսական ընկերությունը, վոր լիազոր իրավական մի մարմին ե (վորին սրենքը ճանաչում ե ինչպես իր գլխու ազատ կերպով գործեր կատարող մի ընկերություն), իրավունք ունի ընկերութայն նպատակները համար շարժական ու անշարժ կայք ձեռք բերել, պայմաններ կապել:

Կառավարական իշխանությունն ամեն կերպ ոգնում ե այդպիսի կոլլեկտիվին, (մի գործում հավաքված մարդկանց ընկերութայնը), ձրի (առանց փողի) հողեր ե տալիանրանց ձեռնաու գնով փայտեղեն ե բաց թողնում նրա շինությունների համար:

Այսպիսով գյուղատնտեսական ընկերությունների գործն այս ե լինում:

1) Գյուղատնտեսական գիտելիքներ (գիտություն) տարածել գյուղացիների մեջ:

2) Գյուղատնտեսությունը բարձրացնելու և ավելի կատարելագործելու համար գյուղացիներին ոգնել յերկրազործական մեքենաներ ու գործիքներ, սերմեր, պարարտանյութեր (հողին կարողություն տվող նյութեր) առնելու եժան գնով, դրա համար առաջին ձեռներից (հենց իրանց խկական տեղից) առանց միջնորդների այդ ապրանքներն եժան առնելով և եժան ծախելով:

3) Հաջողացնել, վոր գյուղացիների հացահատիկն ու մյուս բերքերը մեծ քանակությամբ ծախվեն ձեռնաու գնով իրենց անդամների ապրանքը հավաքելով ու միացնելով:

Որինակով տեսնենք, թե ինչպես եյին կազմվում գյուղատնտեսական ընկերությունները: Վերցնենք թեկուզ Պոլտավայի նահանգի Կառլովկա գյուղում 1903 թվին բացված գյուղատնտեսական ընկերությունը:

Ընկերութայն հիմնադիր-անդամների հենց առաջին ժողովում ընտրվեցին ընկերութայն նախագահը, խորհուրդը և քարտուղարը և վորոշվեց, թե ինչ պետք ե անի ընկերությունը: Ժողովը վորոշեց, վոր սկզբում դեռ պետք ե այս բաներն անել. անասունների կերի համար գանազան խոտեր ցանելով հողի մշակումն ավելի լավացնել, մի հողում, վոր յերեք տարին մի անգամ միկնույն բույան եյին ցանում, այժմ ավելի շատ տարիներ անցնելուց հիտո միկնույնը ցանել, բանացնվող անասուններն ավելի լավացնել, դրա համար ձեռք բերելով լավ սերունդ արտադրող վորձ ձի և յեղ, հացահատիկները, և գյուղաարտադրող վորձ ձի և յեղ, միատեղ ծախելու գործը գլուխ բերել, յերկրագործական մեքենաների ու գործիքների, սերմերի և փայտի պահեստ հիմնել, ցուցական դաշտ սարքել գյուղատնտեսի ղեկավարությամբ:

Ինչպես յերեվում է այդ ընկերության առաջին տարվա գործնեյության հաշվետվությունից, նա ունեցել է սերունդ արտադրելու համար Շվեցի մի յեզ, յերկու հատ շարքացան սերմիչներ, վորոնցով ցանել են ընկերության անդամները, սերմը մաքրելու համար ունեցել վորոմներ (գյուլուղներ) հանելու գործիք, և իր բաց արած գյուղատնտեսական պահեստից գյուղացիներին ծախել է 15 հնձող մեքենա և 10 հատ տասնաշարք սերմիչ շատ ավելի եժան գնով, քան թե տեղական վաճառականներից կարելի յեր առնել: Բացի դրանից, պահեստից ծախել են 55 փութ մի տեսակ բույսի սերմ, 16 փութ մի ուրիշ տեսակի և 11 փութ ճակնդեղ: Ընկերության փողով բացած պահեստից իրանց առած 3.709 ռուբլու փայտից ծախվել է 2.285 ռուբլու: Ընկերության այդ գործից տեղական փայտավաճառներն ստիպված են յեղել իրանք էլ եժանացնել, վորից ոգուտ է բաղել ամբողջ շրջանը: Այդ ժամանակ 4 տարով վարձել են 2 դեօյատին հող և գյուղատնտեսի ձեռքի տակ ցուցադաշտ են շինել:

Մի տարուց հետո ընկերությունն ունեցել է — անդամավճարներից գոյացած 125 ռուբլի, նպաստ (նվեր) ստացած 328 ռուբլի, նահանգական ղեմստվոյից ստացած 200 ռուբլի, և գավառական ղեմստվոյից՝ 200 ռուբլի, հողագործության ղեպարտամենտից (բաժանմունքից)՝ 50 ռուբլի և գործից ստացած զուտ ոգուտ 325 ռուբլի: Բոլոր ծախսերը հանած՝ տարվա վերջին ընկերությանը 1.055 ռուբլի 81 կոպեկ է մնացել:

Ութ ամսվա ընթացքում ընկերության անդամների թիվը 16-ից հասել է 189 հոգու:

Մյուս տարին ընկերության գործը մեծացել է և մի տարվա ընթացքում մասնագետներն ու գյուղատնտեսները հետեվյալ ղեկուցումներն են կարդացել. «անասուններ, կեր բույսեր ցանելու նասին», «հողը գարնանացանքի համար մշակելը և գարնանացանը», «չպարարտացրված և պա-

րարտացրված խամի («հարուսի», չցանված հողի, ցելի) մասին», «սերմնափոխության մասին», «սպառողական ընկերությունների մասին», «մեղվաբուծության մասին», «կառավարյուն վարկային ընկերություն բացանելու մասին», «այգիների խնամելու և տնկելու մասին», «հողերի վերաբաժանման մասին»:

Ինչպես յերեվում է տարեկան հաշվետվությունից, գյուղատնտեսական պահեստից ծախվել են 19 շարքացան սերմիչներ, այսինքն շրջանն սկսել է աշխատել անցած տարին գնած (առած) սերմիչների հետ միասին 29 շարքացան սերմիչներով, յերկուսն էլ վարձու յեն վերցրել ընկերության անդամները, ծախվել են 32 հատ լավացրած տեսակի գութաններ, ձիով գործածելու փոցխ (յեղովի), յուղ հանող մամուլ (մանգյանա), 4 հարդահատիչներ (դարման կտորելու մեքենաներ), 120 թաթ՝ թաթավոր ցաքանների (տափանների) համար 95 փութ մի տեսակ խոտի (վիկի) սերմ, 11 փութ ճակնդեղ, 3 փութ սիմինդ (յեգիպտացորեն, խամբար): Բացի դրանից ծախվել է 9044 ռուբլի 51 կոպեկի փայտ, և ընդհանուր ոգուտ է ստացվել 1.137 ռուբլի: Բերել են տվել ու ծախել մի քանի վագոն ղեմնախնձոր (կարտոֆել) ցանելու համար, վորովհետեւ անցած տարին լավ բերք չեր ստացվել: Այդ միեջևույն տարին ընկերությունը բաց է արել հացահատիկն ամբարելու տեղ, վորտեղ անդամները հավաքել և վաճառել (ծախել) են 7.129 փութ հաճար, 47.747 փութ ցորեն, 351 փութ գարի և 425 փութ վարսակ: Այդ ամբարելու տեղի շնորհիվ կարողացան հացահատիկի փութը 5-ից մինչեւ 10 կոպեկ ավելի թանգ ծախել, քան թե առնում էյին հացահատիկ հավաքողները:

1905 թվին ցուցադաշտը, վորի վրա հնգամյա սերմնափոխություն էյին կատարել, գործնականապես ցույց տվավ գյուղացիներին ու ընկերության անդամներին բազմամյա սերմնափոխության ոգուտը:

1906 թվին ընկերութիւնն իր սահեատից ծախեց 18.343 ուրբլու փայտ, արդեն 10.000 ուրբլու գյուղատնտեսական գործիքներ, մեքենաներ և սերմ, ամբարից ծախեց 179.146 ուրբլու հացահատիկ և տարվա վերջն ունեցավ 3.493 ուրբլի սեփական գրամագլուխ և 627 ուրբլու սեփական գույք, շինեց սեփական ամբար հացահատիկի համար և գյուղատնտեսական ընկերութիւնն ու 1907 թվին բացված վարկային ընկերութիւնն համար տուն:

Կարճ ժամանակում, ընդամենը 4 տարում, ընկերութիւնը մեծ արդյունքներ ստացավ շնորհիւ այն բանի միայն, վոր գյուղացիները միացել էին ընդհանուր շահերի համար, և, ինչպէս տեսանք, այն բանը, ինչ վոր ամեն մի գյուղացի մենակ չէր կարող մտքովն անգամ անցկացնել, բոլորը միասին հեշտութեամբ արին: Ահա թե ինչ է նշանակում միութիւն կամ կոոպերացիա:

Կառուցվա գյուղի բնակիչները նոր հասկացան, վոր առաջվա կյանքի, գյուղատնտեսութիւնն մեջ առաջվա կարգերի ժամանակն անց է կացել և վոր հասել է նոր կարգի, նոր ավելի լավ կյանքի ժամանակը, յերբ մեկն ամենքի համար պէտք է աշխատի և ամենքը մեկի համար:

Գյուղատնտեսական ընկերութիւնները հիմնվում են դոնացան նպատակներով և հողագործ - գյուղացիների տնտեսական ամեն տեսակ կարիքներին բավարարութիւնն տալու համար:

Առաջինը՝ տնտեսութիւնն ավելի լավացնելու համար մեկտրացիայի (հողն ավելի լավացնելու) միջոցով, այսինքն ձահիճները չորացնելու, պետութիւնից անտառ գնելու և մշակելու, աղյուսի (քարփիճի) և կլմենտրի (խեցեղենի), յուղ ու պանիր շինող գործարաններ հիմնելու համար յեվային:

Յրկրորդ՝ յերկրագործական գործիքներ, մեքենաներ,

սերմ, պարարտանյութեր առնելու, գյուղատնտեսական սահեատներ հիմնելու համար:

Յերրորդ՝ հացահատիկ, կաթ, վուշ, կանեփ, թրուշուններ, ձու, կաշի բուրդ, յեղջուրներ ու ամբակներ առնելու և ծախելու համար:

Չորրորդ՝ մեքենաներ վարձու տալու համար, այսինքն—ծիով բանացնելու և շոգեշարժ կալսիչներ, շոգեշարժ գութաններ, արակտորներ, խոտի մամուլներ, հատկագտիչ (հատիկը մաքրող) մեքենաներ առնելու և բանեցնել տալու համար՝ յեվային:

Հենգերորդ՝ վուշ ու կանեփ պատրաստելու և ծախելու համար:

Վեցերորդ՝ բանջարեղեն ու պտուղներ պատրաստելու և ծախելու համար:

Յոթերորդ՝ գետնախնձոր մշակելու և ծախելու համար:

Ութերորդ՝ ձու գնելու և ծախելու համար:

Իններորդ՝ լինում են կաթնատնտեսական և յուղ պատրաստող արտերի:

Համառուտական կենտրոնական Գործադիր կոմիտեյի և Ժողկոմիտորի 1921 թվի սոստոսի 16-ի դեկրետով վերջված է:

1) Գյուղացի աշխատավոր ազգաբնակչութիւնն իրավունք է տրվում կազմակերպելու գյուղատնտեսական կոոպերատիվ ընկերութիւններ կամ արտիչներ թե՛ միասին ոպերատիվ ընկերութիւններ կամ արտիչներ թե՛ իրանց գյուղատնտեսութեամբ սլարապիւլու համար և թե՛ իրանց անդամների աշխատանքը կազմակերպելու համար՝ նրանց տալով գյուղատնտեսութիւնն համար հարկավոր գործիքներ, սերմեր, պարարտանյութեր և արտագրութիւնն ուրիշներ, սերմեր, պարարտանյութեր և արտագրութիւնները միջոցներ, ալլեվ հողագործական արտագրութիւնները մշակելու և ծախելու համար, և վերջապես իրանց անդամների գյուղատնտեսական միջոցներն ավելացնելու և

լավացնելու համար: Ընկերութեան (արտելի) անդամների թիվը հնգից պակաս չի կարող լինել:

2) Գյուղատնտեսական կոոպերատիվ ընկերություններին (արտելներին) և նրանց միություններին իրավունք է տրվում միանալ թե իբրեւ միյեվնույն տեղի մարդկանց և թե իբրեւ միյեվնույն գործի մարդկանց: Մի միությունը կարելի է կազմել յերեք ընկերությունից վոչ պակաս:

3) Գյուղատնտեսական կոոպերատիվ ընկերությունները (արտելները) և նրանց միություններն ոգտվում են իրավական անձերի իրավունքներով, նրանք իրավունք ունեն ծախելու կամ փոխելու իրանց գյուղատնտեսական արտադրությունները, այլևիվ իրանց անդամներինը, իրանց համար անհրաժեշտ (հարկավոր) գործիքներ և նյութեր ձեռք բերել, բանալով արհեստանոցներ, գործարաններ և գյուղատնտեսական մթերքներ մշակելու և վաճառելու ուրիշ անտեսական ձեռնարկություններ, իրանց գործունեություն համար պահաջվող բնակարաններ բուներ, գործող որենքներից թույլատրված պայմաններ կապել և այդ պայմանագրերով պարտականություններ հանձն առնել, պահանջներ ներկայացնել և պահանջների համար պատասխանատու լինել դատական հիմնարկություններում:

4) Միյեվնույն գործով պարավոր յերկու գյուղատնտեսական կոոպերատիվ ընկերություններում (արտելներում) միաժամանակ անդամ լինել չի թույլատրվում:

5) Գյուղատնտեսական կոոպերացիայի տնտեսական ձեռնարկությունները և նրանց պատկանող շենքերը վոչ կողդայնացվեն և վոչ կքաղաքայնացվեն: Գյուղատնտեսական ընկերությունների և նրանց միությունների սեփական արտադրության բերքերը, այլևիվ նրանց գործիք-

ները, նյութերը, վառելիքը և արտադրության մյուս միջոցները չեն յենթարկվում բռնագրավման և ոեկվիզիցիայի (չեն զավթվում ու չեն պահանջվում), միմիայն դատարանի վճռով և ժողկոմխորհի հատուկ վորոշումով կարելի յե այդ անել:

6) Գյուղատնտեսական կոոպերատիվներ կազմակերպելը պետական—անհրաժեշտ գործ է, և պետական իշխանություն թույլը մարմիններին առաջարկվում է սգնությունցույց տալ յերկրագործներին կոոպերանալու գործում և այդ նպատակով—

ա) Վորելվե բան պատվիրելիս կոոպերատիվներին զերադասել մասնավոր անձերից:

բ) Պետական պատվերները և պետության պատկանող գործերը կատարելու համար կոոպերատիվ կազմակերպություններին փող ու մթերք բաց թողնել:

գ) Մասնավոր անձերից կոոպերատիվներին առավելություն տալ նրանց համար բնակարան փնտելիս, գործիքներ ձեռք բերելիս և նրանց համար հում նյութ պատրաստելիս:

դ) Գյուղատնտեսական կոոպերատիվ կազմակերպությունների միջոցները (կարողությունը) բաղկանում է թե փողից և թե մթերքներից, և սկզբնական վճարներից, բաժնեվճարներից, իրանց անդամների տված կանխավճարներից, գրույթներից (ալանդներից, ամանաթներից), մասնավոր անձերից ու հիմնարկություններից արած փոխառություններից (պարտքերից), գործից ստացած ոգուտներից և պետական վարկից:

յե) Գյուղատնտեսական կոոպերատիվ կազմակերպությունները և նրանց միություններն իրանց գործանությունները կատարում են իրանց հաշվով ու իրանց պատասխանատուությամբ, բանվորադյուղացիական տեսչություն նախնական կոնտրոլին (վերաստուգմանը վերահսկ-

կողությանը) յենթակա չեն, և նրանց չեն վերաբերվում հաշվեգործառնությունների (հաշիվ ներկայացնող գործերի) մասին հրատարակված դեկրետի կանոնները.

գ) Գյուղատնտեսական կոոպերատիվ ընկերությունները և նրանց միությունները կառավարող մարմիններն են— ընդհանուր ժողովը կամ լիազորների ժողովը և վարչությունը, և ընդհանուր ժողովի կամ լիազորների ժողովի ցանկությամբ՝ հսկիչ խորհուրդը:

Գյուղատնտեսական կոոպերատիվ ընկերությունների և նրանց միությունների անդամների մանելու և դուրս գալու կարգը, կազմակերպության պարտքի համար նրանց պատասխանատվության չափն ու կարգը, ընդհանուր ժողովի և լիազորների ժողովի ֆունկցիաները (գործը), խորհրդի վարչության և քննիչ հանձնաժողովի կազմը, կարգը և ձևն հաստատված են, այլ յիվ հաշվետվության յեղանակը և գործերը քննելու ձևը ճշտությամբ սահմանվում են իրանց կանոնադրքերով՝ գոյություն ունեցող պետական սրենքների համաձայն.

ե) Այնպիսի գյուղատնտեսական կոոպերատիվ ընկերությունները (արտեյները) և նրանց միությունները, վորոնք իրանց նահանգից դուրս գործ չեն անելու, հիմնելու համար հարկ չկա նախորդ թույլտվություն խնդրել Սորհրդային իշխանության մարմիններից. այդպիսի կազմակերպությունները միայն պարտավոր են ցուցակազրել տալ իրանց կանոնադրությունը նահանգական հողային բաժիններում:

**ՎԱՐԿԱՅԻՆ ՅԵՎ ՓՈՒԱՅՈՒ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Վարկային և փոխառու խնայողական ընկերությունների նպատակն է. ա) իրանց անդամներին եժան և մատչելի վարկ բանալ, վոր անհրաժեշտ է նրանց տնտեսական շրջանառությունների համար. բ) միջնորդիչ գործառնու-

թյուններ կատարել. գ) իրանց անդամների խնայողությունները վերցնել՝ վորոշ տոկոս տալով:

Վոչ մի տնտեսական, արդյունաբերական և առեվտրական գործ չի կարող զարգանալ և բարելավվել առանց վարկի: Իսկի հողագործ գյուղացու նիստ ու կացն էլ չի կարելի այնպես կարգավորել, վոր նա ձեռքում միշտ փող ունենա իր անտեսությունը վարելու և իր ապրուստը հոգալու համար, ուր մնաց թե կարողանա իր տնտեսությունը բարելավել ու մեծացնել:

Գյուղացու ցավերին ել հո վերջ չկա, միշտ կամ աղն է պակաս, կամ մաղը:

Մեկ էլ տեսար կամ կովը սատկեց, կամ ձին. պետք է առնել, բայց փոզը վորտեղից է. հարկավոր է տավարի համար կեր առնել, յերբ վոր իրանը հերիք չի անիլ, կամ հաց է հարկավոր տանը, բայց փող չկա. մեկ չի հացն ու կերն աշունքն առնել եժան ժամանակ, թե գարունքը յերբ քիչ է ու պատահում է վոր փողով ել չես կարողայերք քիչ է ու պատահում է վոր փողով ել չես կարողանում ճարել. սերմը քիչ է, պետք է առնել, թե չե հողն անվար կմնա, ոգուտ չի տալ. պետք է հարկ վճարել, բայց փող չկա, հո չի կարելի ամբարողներին շրի գնով տալ հացահատիկը, վուշը կամ տավարը. ավելի լավ է մի քիչ սպասել և այդ բոլորն ավելի թանգ ծախել. տունը կամ մարագն այրվում է, պետք է նորից շինել, իսկ ապահովազրել տալու փող չկա:

Տնտեսությունը բարելավումն է պահանջում, պետք է յերկրագործական լավ գործիքներ առնել, տավարն ավելացնել, բանվոր վարձել, շենքը մեծացնել, բայց փող չկա, իսկ առանց փողի անկարելի բան է անտեսությունը լավացնել:

Այս բոլոր կարիքների համար առաջ գյուղացիները փող եյին վերցնում վաշխառուներից՝ նրանց անագին տոկոսներ (շահ) տալով կամ կիսագնի նրանց համար աշխա-

տելով պարտքի տեղ, կամ վոչինչ գնով ծախելով նրանց վրա իրանց հացահատիկը, տավարը և մինչեւ անգամ հագի շորը: Վաշխառուն իմանալով, վոր գյուղացին ել ճար չունի, ել փողի տեղ չկա, ոգտվում եր գյուղացունեղ գրությունից ու նեղը լծում, պլոկում քեֆն ուզածի պէս, վորովհետեւ հայտնի բան է, վորքան շատ է ժարդու պակաս—պռատը, այնքան ավելի տոկոս կարելի յէ պոկել նրանից: Գյուղացուց ամիսն առնում եյին 20 տոկոս ել, 30 ել. այնպէս վոր յեթե գյուղացին չեր կարողանում ժամանակին պարտքը տալ, ստիպված եր լինում տարեկան 200—300 տոկոս վճարել: Արինակ՝ յեթե նա վաշխառվից վերցրած եր լինում 100 ուրբի, մինչեւ անգամ ամիսը 10<sup>0</sup>/<sub>10</sub>-ով, նա պետք է մի տարում վճարել իր վերցրած 100 ուրբի պարտքը, 120 ուրբի ել տոկոս: Վաշխառուն կրկնապատկում եր իր դրամագլուխն, իսկ գյուղացին ավելի յեր կորցնում, քան վերցնում եր մի տարում: Դե ել ինչպէս կարելի յեր այդ պայմաններում դեռ տնտեսութունն ել լավացնել կամ փորձանքից դուրս դալ: Այսպիսով գյուղացիներն ամբողջ կյանքում աշխատում եյին վաշխառունների համար՝ իրանց բերանների հացը կտրելով և որեցոր ավելի ու ավելի տնաքանդ լինելով:

Գյուղում մինչեւ վոր այնպիսի հաստատութուն չլինի, վորտեղից գյուղացին կարողանա քիչ տոկոսով փող պարտք անել, նա չի կարող վաշխառվի ճանկից ազատվել ու իր տնտեսութունը լավացնել:

Այդ նեղ դրությունից գյուղացիները կարող եյին դուրս գալ ելի հենց կոտպերացիայի միջոցով միայն, այսինքն յեթե ձեռը պակաս գյուղացիները միանային կադմեյին ընկերութուններ: Ինչ վոր մեկի ուժը չեր պատիլ անել, շատ լավ կարող կլիներ անել վարկային կամ փոխատու—խնայողական ընկերութունը: Այսրը ընկերու-

թյան հո բոլոր գյուղացիներին հենց միեմլուն ժամանակ փող չեր հարկավոր լինիլ:

Այսոր կարելի յէ մեկին պարտք տալ, մի ամսից հետո յերբ վոր դա պարտքը տված կլինի՝ կարելի յէ մի ուրիշին տալ և այսպէս շարունակ: Այն ժամանակ հարուստ գյուղացին հո առանց շահ իր փողը տանը չի քցել, կտա վարկային ընկերությանը, յերբ վոր իրան պետք չի, ու տոկոս կստանա: Վերջապէս յեթե ընկերությունն այնքան փող չունի, վոր բոլոր ուզողներին պարտք տա, բանկը պատրաստ է վարկ բանալ ընկերությանը: Ընկերությունը բանկից պարտք կվերցնի շորս տոկոսով, կբաժանի իր անգամներին վեց տոկոսով, ընկերությունն ել կոգտվի, տերությունն ել, գյուղացին ել:

Այսպիսով հազար իննըհարյուրական թվականներից մեր գյուղերում սկսում են հետզհետե վարկային կոտպերատիվներ առաջ գալ, վոր 1917 թվականին հասնում են 16.426-ի 10.379.913 անգամով:

Վարկային կամ փոխատու—խնայողական ընկերություն հիմնելու համար անհրաժեշտ է, վոր կատարյալ իրավունքների տեր միքանի գյուղացիներ միություն կազմեն՝ գյուղում իրանց՝ այսպէս ասած՝ ընկերական գյուղական գանկ բանալու համար, բայց այդ գյուղացիները 20 հոգուց պակաս չպետք է լինեն: Այդ ընկերության անգամ կարող են դառնալ վոչ միայն միեմլուն գյուղից, այլեւ ուրիշ զանազան գյուղերից: Մի սովորական կանոնադրություն ստանալով՝ ընկերության անգամ հիմնադիրները ժողով են անում, կանոնադրությունը կարդում, յեթե ստորագրում են անում, կանոնադրությունը կարդում, յեթե պետք է՝ փոփոխություններ մացնում մեջը, կամ ամբողջովին ընդունում՝ ինչպէս վոր կա, արձանագրության մեջ մտցնում ժողովի բոլոր վորոշումները և ամենքն ստորագրում կանոնադրությունն ու արձանագրությունը, ուղարկում ցուցակագրելու: Յերբ ընկերության կանոնա-

զրուծյունը ցուցակագրվում վերջանում է, ընկերուծյունը բանկից խնդրում է պարտք տալ գործ անելու համար, և յերբ ստանում է, սկսում է փոքր տոկոսով (տարեկան 9—10 % -ով) նպաստ (պարտք) տալ իր անդամներին, և իր անդամների ու վոչ անդամների պահ տալու բերած փողն ընդունել ավելի պակաս տոկոսով: Այսպիսով վարկային ընկերութայան գործն այն է, վոր ուրիշների բերած փողը վորոչ տոկոսով վերցնի և նույն իսկ հարկավոր դեպքում ինքը պարտք անի բանկից ու մասնավոր մարդկանցից իր վարկային գործն ընդարձակելու համար և իր անդամներին պարտք տա:

Բայց իր անդամներին պարտք տալիս ընկերությունը պետք է իմանա, թե ումն է տալիս և ինչի համար է տալիս: Չի կարելի փող պարտք տալ հարբեցողութայան, քեֆ անելու համար, պարտք անող անդամին վոչ մի արդյունք չբերող ու յեկամուտ չխոստացող գործերի համար: Ընկերությունը պետք է հոգ տանի, վոր իր տված փողն իր անդամին ոգուտ տա և վոր նա կարողանա ժամանակին վերադարձնել այդ փողը: Յեթե ընկերութայան անդամն այդ փողը վերցնում է սերմ առնելու, կամ արհեստական պարարտանյութ, կամ իր գործի համար նյութեղեն կամ ապրանք առնելու համար, պարզ է վոր այդպիսի պարտքը նրա համար շահ կբերի և նա փող աշխատելով կկարողանա ընկերութայան պարտքը տալ: Իսկ յեթե ընկերությունը կսկսի փողն անմիա կերպով սրան-նրան տալ առանց իմանալու, թե ինչ նպատակով են առնում մարդիկ այդ փողը, ինքնըստինքյան պարզ է, վոր նրա յեղած-չեղածը սա ու նա կտանի, ժամանակին չեն վճարել, ընկերութայանն էլ չեն հավատալ վոչ բանկը, վոչ էլ մասնավոր մարդիկ, էլ փող չեն տալ, և սկսած գործը կը քանդվի:

Չպետք է մոռանալ, վոր ընկերութայան պարտք ա-

րած փողի համար ընկերութայան բոլոր անդամները պատասխանատու յեն և յեթե փողը փշանալու լինի կամ կորչի, անդամները պատասխանատու յեն իրենց ունեցած — շունեցածով: Ուստի յերբ 3—4 հոգուց վարչություն են ընտրում, պետք է մտիկ տալ, վոր ընտրված մարդիկ նախ հայտնի լինեն իրենց ազնվությամբ, իսկ յերկրորդ՝ ճանաչելիս լինեն ընկերութայան բոլոր անդամներին, նրանց կարողությունն ու գործի զրուծյունը հայտնի լինի իրանց, վոր կարողանան վորոշել, թե կարելի յե պարտք տալ ընկերութայան այսինչ կամ այն ինչ անդամին և ինչ գումար կարելի յե տալ:

Փող պարտք անելը հեշտ բան է, բայց հեա տալը դժվար է: Չպետք է մոռանալ, վոր նպաստները տալիս են վոչ թե ուրիշի յերաշխավորությամբ, այլ համարյա միշտ պարտք անողին հավատալով, ուստի վարչությունը պետք է խիստ հետեվի, վոր ժամանակն անցած նպաստ չլինի:

Ահա թե ինչպես է գործել կոնստանտինովայի փոխատու-խնայողական ընկերությունը: Գործն սկսելով 1896 թվին 29 անդամով 4.000 ուրբլի դրամագլխով, տասը, տարուց հետո, այսինքն 1906 թվին, այդ ընկերությունն ուներ 3.109 անդամ, 20.000 ուրբլի սեփական գրամագլուխ, 260.060 ուրբլուց ավելի ավանդ և 13.443 ուրբլու գույք: 1906 թվին նպաստ էր տրված 243.000 ուրբլի և վերջին տարին ընդհանուր ոգուտ էր ստացվել 27.000 ուրբլի: Այդ ամբողջ 10 տարվա ընթացքում ընկերությունը ժամանակն անցկացրած վոչ մի նրպաստ չի ունեցել, ընկերութայան վոչ մի անդամի գույքը պարտքից ցուցակագրվել ու ծախվել: Ընկերությունը տեղաչեր ցուցակագրվել ու ծախվել: Ընկերությունը տեղաչեր վորված էր սեփական օարաչեն մեծ զահլիճավոր տանը, վորված էր սեփական օարաչեն մեծ զահլիճավոր տանը, մաքուր սփաղած պատերով և քարե գույնգույն բառակուսիներից շինված հատակով, այդ նույն տանը գետեղված է թեյատուն, վոր բացել է ընկերությունն իր փողով, վո-

ըի մեջ կա մոգական լապտեր, ամպանկարներ և գրադարան: Ահա թե ինչ հետեւականքների կարող ե հասնել վարկային ընկերությունը, յեթե գործը լավ ե գրված: Բայց բանը հաջող գնալու համար պետք ե շատ գգուշ լինել հիմնադիր անդամներ ընտրելիս, իսկ գլխավորն ընկերության վարչությունն ընտրելիս, վորովհետեւ նրանից ե կախ ված ամբողջ գործը, նրանից ե կախված ընկերության մեջ նոր անդամներ ընդունելը և նպաստներ տալը, նրանց շնորհիվ ընկերությունը կարող ե ազգաբնակչության վստահությունը (հավատը) ձեռք բերել, և այդ դեպքում միայն մարդիկ ուրախությամբ ընկերությանը կհանձնեն իրանց ավանդները և անդամ կդառնան: Նույնպես շատ կարեւոր ե ստուգել կամ այսպես կոչվող քննել հանձնախմբի համար համապատասխան մարդիկ ընտրելը, վորովհետեւ նրանք են հետեւում ու քննում ընկերության փողն ու գործը և յեթե այդ մարդիկ հասկացող, ազնիվ ու խելացի յեն, նրանք միշտ ժամանակին կտեսնեն, թե ինչպես են գնում ընկերության գործերը և կարող են ուղղել վարչության արած սխալները:

Շատերին շվարեցնում ե այն հարցը, թե փողը վորտեղ պիտի պահվի, վորովհետեւ մեծամասնությունը կարծում ե, թե ընկերության գանձարանում յերեւի մշտապես շատ փող պիտի լինի: Բայց այդ վախն ու այդպես կարծելը սխալ ե: Այն ընկերությունն ե լավ գործում, վորի գանձարկղում քիչ փող ե մնում և բավականացնում ե միայն ընթացիկ (ձեռաց) պահանջներին: Իսկապես ընկերությանն ինչ ոգուտ, յեթե նրա փողը գանձարկղում ընկած մնա առանց յեկամուտ բերելու: Չե՞ վոր այն ժամանակ ե դրամագլուխը մեծանում, յերբ միշտ շրջանառության մեջ ե լինում և վատ ե այն վարչությունը, վորը փողը շրջանառության տալու փոխարեն, պարտք տալու կամ ընկերության անդամների հանձնարարությամբ գանազան գյուղատնտեսական իրեղեններ (մեքենաներ,

տավար, սերմ յեւային) առնելու փոխարեն՝ պահում ե առանց յեկամտի, կողպած: Այդ դեպքում ավելի լավ ե ընկերությունն չկազմել, վորովհետեւ անշարժ ընկած փողը բացի վրասից ուրիշ բան չի տալ, վորովհետեւ նրա համար պետք ե սոկոս տալ նրանց, ումից վոր վերցըրված ե այդ փողը (բանկին կամ ավանդատիրոջը), իսկ ինքը յեկամուտ չի տալիս:

Ընկերության միջոցները (ուներացածը) սովորաբար կազմվում են հիմնական և շրջանական դրամագլխից:

Հիմնական դրամագլուխն այն դրամագլուխն ե, վոր ընկերությունը շատ թե քիչ յերկար ժամանակով պարտք ե վերցնում Պետական Բանկից կամ ուրիշ տեղից, բայց այդ դրամագլուխն ընկերության գործառնությունների համար սովորաբար բավական չի լինում, ուստի և՛ ընկերությունն ստիպված ե լինում պարտքեր անել և ավանդներ ընդունել: Ավանդներն ու պարտքերը կազմում են ընկերության շրջանական դրամագլուխը, վոր հիմնական դրամագլխից միայն կարող ե ամենաշատը 10 անգամ դրամագլխից օրինակ, յեթե ընկերության հիմնական դրամագլուխը 4.000 ուրբլի յե, շրջանական դրամագլուխը չի կարող 40.000 ուրբլուց ավել լինել:

Թե հիմնական և թե շրջանական դրամագլուխները փոխ (պարտք) են տրվում: Ընկերության կանոնադրության մեջ պետք ե սսված լինի, թե ամենաշատն ինչ գումար ե կարելի նպաստ տալ ընկերության մի անգամին, և վարչությունը դրանից ավելի չի կարող պարտք տալ մի անգամի:

Պետք չի վոր ընկերությունը շատ ել մեծ լինի, մանավանդ սկզբում, վորովհետեւ վարչությունը չի կարող հասկանալ շատ անդամների վարկունակությունը (պարտքը հետ տալու կարողությունը) և անտեսական դրությունը, այդ պատճառով ել նպաստ տալուց կարող ե սխալի մեջ ընկնել, բացի դրանից, ընկերության անդամներն սկսում

են վարկային ընկերութիւնը համարել մի կողմնակի (իրանց հետ կապ չունեցող) հաստատութիւն, վորից կարելի չե փող ստանալ, իսկ ընկերութիւն գործերով իսկի չեն ել հետաքրքրվում, մինչդեռ շատ կարեւոր է, վոր ընկերութիւն բոլոր անդամները մասնակցեն ընդհանուր ժողովներին և կենդանի մասնակցութիւն ունենան նրա գործերում: Չպետք է մոռանալ, վոր ընկերութիւն գործի տերը նրա բոլոր անդամներն են, այսինքն ընդհանուր ժողովը, իսկ վարչութիւնը և քննիչ-ստուգիչ հանձնախումբը միայն նրա լիազօրներն են և գործի վերաբերյալ կարող են կարգադրութիւն անել միայն այնքան, վորքան վոր ընդհանուր ժողովը լիազօրութիւն կտա նրանց: Բայց հայտնի բան է, յետք գործի տերն իր գործին ուշադրութիւն չդարձնի, ամեն բան թողնի գործակատարներին ու կառավարիչներին վրա, նրա գործը լավ չի կարող լինել:

Վարչութիւն ընտրելիս մեշտ հարկավոր է հիշել վոր այնպիսի մարդկանց պետք է ընտրել վորոնք նախ յեվ առաջ ազնիվ լինեն և վոչ մի կեղտոտ բանում խառնված չլինեն, վոր կարելի չլինի հյուրասիրելով, ազդականութեամբ կամ խնամիութեամբ նրանից անկանոն կերպով փող ստանալ կամ այնպիսի արտոնութիւններ (առավելութիւններ), վոր կանոնադրութիւն մեջ չկան. յերկրորդ՝ վոր նրանք նվիրված լինեն կոոպերատիվ գործին և ընկերութիւնը համարեն հասարակական գործ և ծառայեն վոչ թե միայն իրանց շահի համար, այլեւ ընդհանուր ոգտի համար. յերրորդ՝ հարկավոր է վոր նրանք հասկանան այն գործը, վորի համար ընտրվում են, և իմանան թե ինչ բան է վոչ միայն տնտեսութիւնն ընդհանրապես, այլեւ տեղական տնտեսութիւնն զրութիւնը, ընկերութիւնն ամեն մի անդամի տնտեսական զրութիւնը, նրա վարկունակութիւնը, կարողանան ճիշտ վորոշել,

թե փոխառութիւնն ստացող անդամն ընդունակ է արդյոք ժամանակին վճարելու իր պարտքը: Բայց դա չինչանակում, թե վարչութիւնն անդամ պետք է ընտրել միայն հարուստներին, վարկային ընկերութիւնն մեջ կարող են մտնել նայել ամենաաղքատները, բայց՝ իհարկէ՝ նրանք, ովքեր վոր ազնիվ են, աշխատասեր և ջանասեր, վորովհետեւ այդպիսի ընկերները փոխառութիւնը չեն ուտիլ, հենց ընկերութիւն գործերն ել նրանց համար կլինեն ավելի կարեւոր ու թանգ, քան թե հարստի համար: Յեւ պետք է մոռանալ, վոր վարկային ընկերութիւնն ուղղակի ել հենց աղքատներին ոգնելն է, վոչ թե հարուստներին, վորոնք առանց ընկերութիւնն ել կարող են փող ճարել:

Այսպիսով վարկային ընկերութիւնը 1) փոխառութիւնն է տալիս միայն իր անդամներին. 2) փոխառութիւնը տալիս է զանազան ժամանակով, նայած թե ինչի համար են վերցնում, սերմացու գնելու, թե՛ պարարտանյութ, կամ կեր. փոխառութիւնը տրվում է մի տարուց վոչ ավելի ժամանակով կենդանի գույք (ձի, կով) առնելու համար, իսկ թանգ արժեք ունեցող գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ գնելու համար մինչեւ յերեք տարի ժամանակով յեվայն. 3) փոխառութիւնը տալիս են կամ վերցնողին իրան հավատարմով, կամ ուրիշ մեկի յերաշխայով բութեամբ, կամ զրավականով, կամ ապահովելով շարժական կամ անշարժ կայքով, որինակ՝ հացավելով շարժական կամ անշարժ կայքով. 4) միջնորդող գործեր են հատիկով, շրաղացով յեվայն. 4) միջնորդող գործեր են կատարում թե իրանց անդամներին համար անհրաժեշտ իրեղեններ գնելով, թե՛ ձեռնտու գնով անդամների ձեռագործն ու նրանց մթերքները վաճառելով (ծախելով):

Ձի կարելի մոռանալ, վոր ընկերութիւնն գործն ուղիղ հիմքերի վրա գնելու ամենից գլխավորն այն է, վոր նրա հաշվապահութիւնն ու հաշվետվութիւնը կանոնա-

վոր լինի. այն ժամանակ միայն կարելի յե ասել թե ընկերության գործը սխալ ճանապարհով չի գնում, յերբ նրա ամեն մի արած գործն ամեն որ ինչպես հարկավորըն է կգրվի տետրներում, վորովհետև միմիայն այդ ժամանակ ընկերության գործերը հայտնի կլինին թե վարչությանը թե ընկերության անդամներին, դրա համար վարչութիւնը չպետք է փողն ամսոսա և պետք է գործը լավ հասկացող ու միանգամայն փորձված մի հաշվապահ վարձի. այն ժամանակ միայն կարելի յե հանգիստ լինել ու հավատացած, վոր գործն ուղիղ է գնում:

#### ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

Արտադրական (վորեվե բան պատրաստող) ընկերութիւնների նպատակն է. ա) իր անդամներին հավաքել և վորեվե գործ անել տալ. որինակ՝ վորմնագիրների (բանահանների), հյուանների (գուրգարների), բարձողների և այլ արտելներ կազմել. բ) իր անդամների համար ճարել հում (անպատրաստ) նյութեր, գործիքներ (հաջաթ) բան պատրաստելու համար. գ) իր անդամների պատրաստած բաները ծախել տալ:

Գյուղական կոոպերացիայի այս յերրորդ տեսակն են ընկերության արդադրական արտելները, այսինքն գյուղացի տնայնագործների (տանը բան պատրաստողների), արհեսավորների միութիւնները, վորոնք իրենց անդամների աշխատանքը կազմակերպում են վորևե աշխատանք կատարելու համար, կամ վորեվե պարապմունք ունեցող արտելները, որինակ՝ վորսորդների, ձկնորսների և ուրիշ արտելներ:

Արտադրական-աշխատավորական կոոպերատիվները այս տեսակ կոոպերացիայի գլխավոր նշանն այն է, վոր այդպիսի միութիւն մեջ վարձու աշխատանք ասած բանը չկա, անդամներն իրանք են անում ամեն մի գործ, իհարկե բացի այն դեպքերից, յերբ հարկավոր է մասնագետ

վարպետ, որինակ՝ շոգեշարժ կամ նավթով բանող մեքենայի համար մանույր, (մեքենայի վարպետ):

Այդպիսի կոոպերատիվ միութիւններ կազմելու պատճառն այն է, վոր հողագործը բոլոր տարին գործ չունի, մինչդեռ իր տնտեսութիւնից յեկամուտը հերիք չի անում իր ընտանիքը կերակրելու, պահել պահպանելու համար, դրա համար ել հարկավոր է լինում քաղաք գնալ փող աշխատելու կամ տանը մնալուց մի գործ անել: Ախր իսկի չի ել կարելի տարվա միայն կեսն աշխատել ու վորջ տարին լավ ապրել. անպատճառ հարկավոր է, վոր դաշտի գործը վերջանալուց ազատ ժամանակ մարդ մի բան չինի: Ժամանակն է, վոր գյուղացին դեն դնի ձմեռվա պարապ-սարապ մնալու, ուղաներում դարտակ նստելու սովորութիւնը: Պետք չի մոռանալ հիմիկվա պայմանախոսքը (լոգունգը), թե «ով աշխատի, նա կուտի»:

Մեր ձմեռն այնքան յերկար է, վոր վոչ միայն հողագործ-տնայնագործի աշխատանքը կարելի յե գյուղի տնտեսութիւն համար գործ ածել, այլեվ նրա աշխատանքի ավելորդը կարող է նրա համար յեկամուտի մեծ ազբյուր դառնալ:

Տարվա մեջ շատ-շատ միայն 185 որ է կարելի դաշտի աշխատանք կատարել, իսկ մնացած 180 որը հողագործն ինչ կուզի կանի, անա թե ինչու Ռուսաստան տնայնագործութիւնն ավելի յե գարգացած, քան ուրիշ տեղեր: Բազմական է ասել, վոր միայն Յեվրոպական Ռուսաստանի 40 նահանգներում հողը քիչ լինելու պատճառով միլիոնն ու կիսի չափ ամեն տեսակ տնայնագործ կա, և կարելի յե հաստատ ասել, վոր տնայնագործութիւնով յոթը միլիոնի չափ մարդ է ապրում այդտեղ:

Բայց մեր տնայնագործներն ել առնող հավաքողների (СКУПЩИКИ) ձեռքում են յեղել, վորոնք տալիս են յե-

դել անայնագործներին նյութեղեն, գործիքներ, իսկ պատրաստած իրեղենների համար գոռչներ վճարում: Տնայնագործը միանգամայն կախված էր այդ գործ տվողներից և ուզեր-չուզեր, պետքե ընդուններ նրա առաջարկած պայմանները, վորովհետեւ յեթե միքիչ ավելի պահանջեր, գործ տվողը նյութեղեն չէր տալ, և անայնագործը պարագ կմնար, ինքը նյութ ու հարկավոր գործիք չունենալով, իր շինած ապրանքը սաղաջնելու տեղ չունենալով՝ անայնագործը մնում էր շվարած ու տուն ու տեղով քաղցած:

Յեւ այդ ճորտական դրությունից դուրս գալու համար անայնագործները մտածեցին արտագրողական (բան պատրաստող) միություններ կամ արտելներ կազմել և թե գործը և թե նյութեղենն ստանալ ուղղակի այն հաստատություններից, վորոնք առաջել առնում էին իրանց ապրանքը, բայց միջնորդների, գյուղական հարուստների միջոցով: Առաջ հարստությունը մեն մենակ անայնագործին հավատ չէր ընծայում նյութեղեն տալ, վորովհետեւ չէր ճանաչում, և հարյուրավոր անայնագործներին հետ գժվար էր գլուխ դնել, բայց հիմա արտելի հետ կարող էր գործ ունենալ, վորովհետեւ արտելի ներկայացուցիչը տնայնագործի ու հաստատության մեջ յեղած միջեմնուն միջնորդն է, ինչ վոր առաջ գործ տվող հարուստն էր, իսկ արտելին էլ ամենից ավելի գումարի նյութեղեն կարելի չէ տալ: Այդպիսի արտելներ շատ սկսեցին առաջ գալ մանավանդ կենտրոնական արդյունաբերական շրջաններում, վորտեղ անայնագործ դերձակները պատրաստում էին շոր, զինվորների համար հագուստեղեն յեմայն: Սկսեցին կազմվել անայնագործների, գերձակների, կոշկակարների, թամբագործների արտելներ, զինվորների համար սպիտակեղեն կարողների և ուրիշ արտելներ: Դրանք արտագրողական գյուղական արտելներն էին:

Ուրիշ արտելներ էլ կազմվեցին գործի համար հարկավոր նյութեղենն առնել—պատրաստելու և դրանց պատրաստած իրեղենները ծախելու համար:

Այդ արտելները կազմվելու նպատակն այն էր, վոր միասին միանգամից շատ նյութեղեն առնեն ուղղակի մեծ առեւտրականներից, դրա համար էլ՝ որինակ՝ տեղական խանութներում կոշկեղենի համար առած ապրանքը յեթե 100 ուրբլի յեր նստում արտելի վրա, շատ վոր առնում էին, նստում էր 5:—69 ուրբլի. բուրդը խանութներից անայնագործն առնում էր 100 ուրբլով, իսկ արտելին նստում էր 65—70 ուրբլի. 100 ուրբլի նստող յերկաթն արտելն առնում էր 18—60 ուրբլի: Հենց միայն առնելու մեջ տես ինչ ոգուտ էին ստանում մենակ անայնագործները միանալուց և արտել կազմելուց: Զինվորական մատակարարությանը, ծովային վարչությանը տնայնագործական շատ տեսակ իրեղեններ էր պետք լինում, բայց մենակ մարդկանց պատվեր չէին տալիս, հարկավոր էր կազմակերպություն, վոր շատ մարդկանցով դրանց պատվերը կատարեր և մի տեսակ բան պատրաստեր. այսպիսով տնայնագործներն ու միություններն սկսեցին կազմվել վոչ միայն մեծ քանակությամբ հում նյութ ու ուրիշ նյութեղեն առնելու համար, այլեւ բաներ պատրաստելու և իրանց պատրաստածը ծախելու համար:

Գյուղացիներն սկսեցին այլիս մենակ չգնալ դուրս աշխատելու, վոր ճարպիկ կապալառուները (փողրաթչիները) գոռչներ վարձ տան իրանց, այլ միանալով և արտելներ կազմելով՝ իրանք սկսեցին զանազան գործերի (հյուանության, վորմնադրության, կահագործության, սվաղելու յեմայն) կապալներ (փողրաթներ) վերցնել:

Համառուսական կենտրոնական Գործադիր կոմիտեյի և ժողովրդական կոմիսսարների Խորհրդի՝ արտագրողական կոոպերացիայի մասին 1921 թ. հուլիսի 7-ի դեկրետում ասվում է.

1. Տնայնագործական և ուրիշ արդյունաբերական աշխատավորներին միատեսակ գործով զբաղվելու նըպատակով իրավունք ե տրվում կազմելու արտադրողական կոոպերատիվ ընկերություններ կամ արտելներ միասին արտադրելու համար, ինչպես և իրանց անդամների աշխատանքը կազմակերպելու համար, նրանց արտադրություն համար պահանջվող նյութեր, գործիքներ և գործը սարքելու առարկաներ հայթայթելու (հասցնելու) համար, իրանց անդամների աշխատանքի արդյունքները մշակելու (պատրաստելու) և վաճառելու համար, այլևս նրանց արտադրած առարկաների շահին ավելացնելու և վորակը (հատկությունը) լավացնելու նպատակով ուրիշ միջոցներ ձեռք առնելու համար, արտադրողական կոոպերատիվ ընկերությունների անդամների ընդհանուր թիվը չի կարող 5-ից պակաս լինել:

2. Արտադրողական կոոպերատիվ ընկերություններն (արտելները) կարող են միություններ կազմել իբրեւի համայնակցներ և իբրեւի արհեստակիցներ, և միության կազմի մեջ մանող կոոպերատիվների թիվը չի կարող յեքքից պակաս լինել:

3. Միյեվնույն ժամանակ միյեվնույն արտադրություն միության 2 արտադրողական կոոպերատիվների անդամներ լինելը չի թույլատրվում:

4. Արտադրողական կոոպերատիվների ձեռնարկություններն, այլևս արտադրողական կոոպերատիվների ձեռքում գտնվող իրանց արտադրություններն, ինչպես նաև իրանց արտադրության համար ձեռք բերած նյութերը, հում նյութերն ու սարքը չեն յենթարկվում վոչ ազգայնացման վոչ քաղաքայնացման:

5. Արտադրողական կոոպերատիվներ կազմելը պետություն համար անհրաժեշտ գործ ե, և պետական իշխանություն թոյր մարմիններին առաջարկվում ե աջակցություն (ոգնություն) ցույց տալ տնայնագործներին կոոպերանալու և այդ նպատակով 1) պատվերներ տալիս կոոպերատիվներին մասնավոր մարդկանցից առավելություն տալ. 2) կոոպերատիվ կազմակերպություններին կանխավճարներ տալ պետական հում նյութ և դրամական միջոցներ, վոր կարողանան կատարել պետական պատվերները և առաջարկությունները, և 3) կոոպերատիվ կազմակերպություններին առանձին անձնավորություններին առավելություն տալ իրանց անհրաժեշտ (անպատճառ հարկավոր) շինություններ փնտռելիս, գործիքներ ձեռք բերելիս և իրանց անհրաժեշտ հում նյութ պատրաստելիս:

6. Արտադրողական ընկերությունների (արտելների) և նրանց միությունների գործունեյություն շրջանը, արտադրողական այդ կոոպերատիվ կազմակերպությունների անդամների անդամագրվելու և անդամությունից դուրս գալու կարգը, կազմակերպության պարտավորությունների համար բոլոր անդամների պատասխանատվության սահմանը (չափն) ու կարգը, լիազորների ընդհանուր ժողովների ֆունկցիաները (գործողությունները), պաշտոնը, կառավարչության և կոնտրոլի (վերահսկողություն) մարմինների ընտրության կարգն ու ձեռնհասությունը (իրավունքները), նայել կազմակերպության գործերի վերաբերմամբ հաշվետվության յեղանակը (ձեւը) և գործերը քննելու կերպն իրանց կանոնադրություններն են վորոշում՝ գործող որենքների համաձայն:

7. Այն արտադրողական կոոպերատիվների միությունների համար, վորոնք իրանց նահանգից դուրս վոչ մի գործ չեն անում, առաջուց պետք չի լենդրել խորհրդային իշխանություններին, վոր թույլ տան կազմակերպել. դրա համար բավական ե հենց դրանց կանոնադրությունը նահանգական ժողովրդական անտեսություն լսող հուրհուրում ցուցակագրել տալ:

Ահա մեր գյուղական կոոպերացիայի հիմնական տեսակներն ընդհանուր գծերով:

Ամեն մի գյուղացի վոր կարգա այս գրքույկը, կհասկանա, թե ինչ անագին նշանակութուն ունի կոոպերացիան գյուղացիների լավ ապրուստի համար, թե գյուղացիների համար ինչ անագին նշանակութուն ունի միանալ ու կազմել միութուններ, ընկերութուններ, արտելներ: Պարզ է վոր միայն կոոպերացիայի ցույց տված ճանապարհով է կարող մեր գյուղացիութունը լավացնել իր տնտեսութունը, իր նյութական զրությունը, ազատվել հարյուրավոր, հազարավոր գյուղական հարստահարիչներէրց, վորոնք մեր բաժան-բաժան յեղած գյուղացիութեանն իրանց պինդ բռնող ձեռքերի մեջ բռնած պահում են:

Ահա թե «Պրավդա» (ճշմարտութուն) լրագրում ինչպես են նկարագրում Շունգայի գավառակում կոոպերացիայի կատարած գործերը, վորի որինակին պետք է հետեւի մեր գյուղացիութունը:

Գյուղատնտեսական կոոպերատիվների Շունգայի միութունը միայն գավառակային է: Դժվար թե Ռուսաստանում մի ուրիշ այնպիսի գավառակ ել ճարվի, վորտեղ կամավոր անդամագրութուն ունենալով՝ բնակիչների 92 տոկոսը կոոպերատիվ կերպով կազմակերպված չինի, վոր ունենա կոոպերատիվ գյուղատնտեսական արդյունաբերութուն, վորը բավականութուն տա ամբողջ բնակչութեանը (Շունգայի գավառակում 15 խոշոր կոոպերատիվ ձեռնարկութուն կա, վորը մշակում է գետնախնձոր (կարտոֆել) և գյուղատնտեսական ուրիշ արդյունքներ), վորտեղ ազգաբնակչության 90 տոկոսը գրագետ լինի և այնքան կրթված, վոր այնտեղ կարելի լինի տեսնել՝ որինակի համար՝ գավառակի ամբողջ 3.000 տան լույս տվող ելեկտրականութուն, վորտեղ ելեկտրականութեամբ վարելիս լինեն 4.000 դեսյատին հող:

Շունգայի գավառակը մեր ժամանակվա գյուղատնտեսական Ռուսաստանի հրաշքն է: Նշանակալիցն այն է, վոր այդ հրաշքը կատարվել է մեր աչքի առաջ: 1909 թվին շինվեց այդ գավառակում և ամբողջ Ռուսաստանում առաջին կոոպերատիվ ոսլայի (կրախմալի) գործարանը: Հիմի կոոպերացիան Շունգայի գավառակում կատարյալ և փայլուն հաղթանակ է տարել թե մասնավոր կապիտալի (հարստութեան փողի) առաջ, թե անկազմակերպութեան առաջ, թե անկրթութեան առաջ:

Փառք ու պատի՛վ Շունգայի կոոպերատիվ գավառակի աշխատավորներին ու գործը գլուխ բերողներին:

Բայց ամեն մարդ իրավունք ունի հարցնելու, թե շունգացիներն ինչ են արել, վոր հասել են այդ զրութեան: Կարելի յե շունգացիների որինակից ոգուտ քաղեն ուրիշ գավառակներ և միյեվնույն ճանապարհով գրանան զեպի գյուղատնտեսական և քաղաքակրթական հաղթանակ:

Շունգայի գավառակում այդ հրաշքը կատարել են Խորհրդային իշխանութունը, կոոպերացիան և գետնախնձորը (կարտոֆելը): Եդ նրանք են կատարել այնտեղ «քաղաքակրթական հեղափոխութուն» և թույլ տվել հողի այդ փոքրիկ կտորի վրա տեսնելու ամբողջ գյուղատնտեսական Ռուսաստանի ապագան և մեզ ափաշքարա որինակ տվել:

Ինչքան որինակը նշանավոր է, այնքան էլ գավառակըն է նշանավոր... Վոչ հող ունի, վոչ ունեցած հողն է մի բանի նման, իր շինած ապրանքը ծախելու տեղ ել չունի, այնքան հեռու է կենտրոնական շուկաներից (ապրանք ծախելու տեղերից):

Շունգացիները պատերազմ են հայտարարել մասնավոր գործարանատերերին, նրանց ձեռքից խլել են բոլոր գործարանները, միյեվնույն ժամանակ շատ էլ նոր

կոոպերատիվներ են հիմնել: Դրանից հետո նրանք սկսել են իրանց գետնախնձորը «սաղացնել» մշակված դրությամբ յերկուս ու կես անգամ ավելի մեծ շահով, քան թե այն ժամանակ, յերբ անպատրաստ գետնախնձորն եյին ծախում, և այն ժամանակ Շունգայի գավառակի մի դեսյատին հողը քսան դեսյատինի ոգուտ է սկսել տալ:

Շունգացիներին ապա մի հարցրու, թե ամեն մի տուն ինչքան վարելահող ունի: Պատասխանից ծիծաղկ կգա. մի քառորդ կամ շատ-շատ կես դեսյատին:

Բայց այ, կարտոֆելը դուրս յեկավ ու առաջին հր-ըաշքը գործեց—Շունգենի գավառակի քիչ հողը շատացը-րեց: Շունգացիները ցորեն-գարի չեն ցանում, միմիայն գետնախնձոր են ցանում: Ամեն տարի հողի 95 տոկոսը նրանք գետնախնձոր են ցանում: Յերեք տարվա «խամ» հող չունեն, ուստի իրանց արտերի 1/3 մասը շահում են. դրա համար նրանց մի սովորական դեսյատինը դարձել է մեկուկես դեսյատին:

Յեզ վորովհետեզ շունգացիներն իրանց հողի առան-ձին հատկության շնորհիվ միայն գետնախնձոր են ցանում, դրա համար էլ յերեք անգամ ավելի շատ փող են վեր-ցնում իրանց ցանածից, քան թե յեթե վարսակ կամ հա-ճար ցանեյին: Միշտ էլ բերքը լավ է լինում, փշանալուց վախ չկա: Ուրեմն այդպիսով նրանց մեկուկես դեսյատինը դառնում է չորսից ավելի, կամ մեկուկես դեսյատինից նրանք ստանում են չորս դեսյատինի բերքից էլ ավելի:

Կարտոֆել վարողը փոշմանել չունի: Ինչքան էլ շատ չարչարվես վրան, այնքան ավելի ոգուտ կվերցնես: Բայց դրա համար էլ պետք է գործը հասկանաս: Շունգացի-ներն էլ հասկացող դարձան, սովորեցին, թե ինչպես պետք է ուղիղ մշակել գետնախնձորը: Դրա համար էլ նրանք յերկու անգամ ավելի գետնախնձոր ստացան, քան թե Ռուսաստանի ուրիշ տեղեր են ստանում: Շունգացիների

համար այդ բերքն էլ հաստատ բերք է: Ուրեմն այսպի-սով շունգացիները չորս դեսյատինը դարձրել են ութ:

Բայց գետնախնձորի համար դա էլ հերիք չի. նա դեռ պահանջում է, զոր իրանից մի ուրիշ բան պատ-րաստես: Անպատրաստ այդքան գետնախնձորն ի՞նչ պիտի անես: Իսկապես վոր Շունգայի գավառակում գետնախն-ձորը վաղուց է վոր շինում են ոսլա (կրախմայ). միայն թե դրա համար գետնախնձորը ծախում եյին մասնավոր գործարանատերին, վորը դրանից ահազին ոգուտ էր վեր-ցնում, մոտավորապես այնքան, վորքան վոր արժի մեր գյուղատնտեսական Ռուսաստանի մեծ մասի գետնախն-ձորի մեկուկես բերքը: Շունգացիները հաջողապես իրանց մեջ կատարյալ կոոպերատիվ հաստատեցին, ելեկտրակա-նություն էլ ստացան ու կրթություն էլ:

Շունգայի որինակը ցույց է տալիս, թե գյուղում գյուղատնտեսական կոոպերացիան ի՞նչ ասես վոր չի անիլ:

**Ը. ԼԵՆԻՆՆ ԻՆՁ Ե ԱՍՈՒՄ ՀԻՄԻԿԱ ԿՈՊՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ**

Ը. Լենինն այս տարի հունվարին զրած հողվածում, վորի վերնագիրն է «Կոոպերացիայի մասին», բացատրում է կոոպերացիայի նշանակությունը պետական շինարարա-կան գործում ներկայումս, յերբ հեղափոխությունը հաղ-թած է, և պրոլետարիստն իր ձեռքն առնելով իշխանու-թյունը և խորհրդային պետական հասարակարգ ստեղծե-լով՝ կպել է պետական շինարարության և յերկրի բարե-կեցությունն էլ ավելի լավացնելու գործին:

«Մեզ մնում է, —ասում է ընկեր Լենինը,—իսկապես, քանի վոր պետական իշխանությունը բանվոր դասակարգի ձեռքին է, քանի վոր այդ պետական իշխանությանն են պատկանում արտադրության բոլոր միջոցները, մեզ մնում է իսկապես միայն մի բան անել. —ազգա-բնակչությունը կոոպերացնել»:

Յեւ վորովհետեւ շատ մարդիկ կան, վոր իսկի մի չեն եւ մտածում թե ինչ հսկայական նշանակութիւնն է ստանում մեզ համար Ռուսաստանի կոոպերացումը, ք. Լենինն եւ գրեւ ե այդ հողվածը:

«Իսկապես ստած, — գրում է հա, — քանի վոր կա նեպ-ը (նոր եկոնոմիական պոլիտիկա, նոր տնտեսական քաղաքականութիւն), այնքանն էլ հերիք է վոր կարողանանք մեր ժողովուրդը մի լավ կոոպերացնել ինչպես հարկավորն է, վորովհետեւ մենք հիմա գտել ենք մասնավոր շահի (ոգտի), մասնավոր առեւտրական շահի միտցման, պետութեան կողմից այդ շահն ստուգելու և նրա վրա հսկելու այն առտիճանը, ընդհանուրի շահերին նրա յենթարկվելու աստիճանը, վոր առաջ շատ սոցիալիստների համար գայթակղութեան քար էր: Յեւ իսկապես, պետութեան իշխանութիւնն արտադրութեան բոլոր մեծ-մեծ միջոցների վրա, պետութեան իշխանութիւնը պրոլետարիատի ձեռքին, այդ պրոլետարիատի միութիւնը շատ-շատ միլիոնավոր մանր ու ամենամանր գյուղացիների հետ, այն, վոր գյուղացիութեանը ղեկավարում է (ճանապարհ է ցույց տալիս այդ պրոլետարիատը յեւայլն) միթե բոլորը չէ՞ դա, ինչ վոր հարկավոր է, վոր կոոպերացիայից կատարյալ սոցիալիստական հասարակութիւն ստեղծենք, այն կոոպերացիայից, վոր առաջ մենք բանի տեղ չեյինք գնում իբրեւ չարչիական գործ և վորը վորոշ բանի համար հիմա, նեպ-ի ժամանակ էլ իրավունք ունենք արհամարհելու: Դա գեռ սոցիալիստական հասարակութիւն ստեղծել չի, այլ դա այն բոլորն է, ինչ վոր ամենհարկավորն է ու բավական է այդպիսի հասարակութիւն ստեղծելու համար»:

Մեջ բերելով և բացատրելով ընկ. Լենինի միտքն այնպես, վոր ավելի հասկանալի լինի, մենք կպատմենք աշխարհիս ամենակոոպերատիվ յերկրի, փոքրիկ Դանիայի

մասին, վորը կարող է ողինակ լինել, թե ինչպես են հասնում այն հետեւականքներին, վորոնց մասին խոսել է ընկ. Լենինը:

Մի փոքր թերակղզու և միջանի կղզիների վրա յե գտնվում փոքրիկ Դանիան, վորտեղի բնակիչներն հագիվ-հագ 3 միլիոնից միքիչ ավելի յեն: Չնայած դրան այդ յերկրի անունը վողջ աշխարհով մեկ է յեղել իբրեւ յերկրաշնչիս յերեսին ամենակոոպերատիվ մի յերկիր: Դանիան առավելապես հողագործական յերկիր է: Մի հիսուն տարի սրանից առաջ Դանիայի գյուղացին շատ աղքատութիւնն էր քաշում: Բայց նրան ոգնութեան հասան գիտութիւնն ու կոոպերացիան, և գյուղական Դանիան հարստացավ ու ծաղկեց: Դանիացի գյուղացին շատ քիչ հող ունի, բայց վորովհետեւ նա իմանում է, թե այդ հողին ինչ պիտի անի, վոր լավ բերք տա, դրա համար էլ ամեն մի պատառ հող նրան այնքան յեկամուտ է բերում, վոր մեզ մոտ իսկի յերազումդ էլ չես տեսնիլ: Միյեմնույն ժամանակ Դանիացի գյուղացին առանց կոոպերացիայի վոչինչ չի անում: Թե կով ունի, կաթը տա-նում է կոոպերատիվ յուղագործարանը և այնպիսի լավ գնով է ծախում, վոր յերբեք չեր ստանալ, թե իր տանը ծախեր: Թե ծախելու խոզ ունի, նա ծախում է կոոպերատիվ սպանդանոցի (ղասաբխանայի) միջոցով յեւ ելի հենց նույն ոգուտն է տեսնում: Թե հավ ունի, ձուն տանում է տալիս ձվի ընկերութեանը: Մախու ինչ ունի-չունի, բոլորն էլ այդպես է անում: Դրա հակառակն էլ ինչի հարկավորութիւնն վոր նա ինքն ունի — պարարտա-նյութի, կերի (ապուրի), մեքենաների, սերմերի, — նա ամեն ինչ առնում է վոչ թե առեւտրական-սպեկուլյանտ-ներից, այլ առեւտրական կոոպերատիվ ընկերութիւն-ներից, վորոնք վոչ միայն ավելի էժան են տալիս ապ-րանքը, այլ յեւ անպայման լավ ապրանք են տալիս:

Դանիան շատ բանով զարմանալի մի յերկիր է, վոր-տեղից կարելի չէ շատ-շատ բան սովորել: Հենց որինակ սպառողական կոոպերացիան: Մյուս համարյա բոլոր յերկրներում քաղաքների բանվորներն են առավելապես սպառողական ընկերութիւններ հաստատել. իսկ Դանիայում սպառողական ընկերութիւնների մեծ մասը ցրված է գյուղերում ու գյուղացիների կարիքներին և բավականութիւն տալիս: Ու թեկուզ այդ բոլոր ընկերութիւնները շատ պատիկ են, ամեն մինը 165-ի շափ անդամ ունի և սովորաբար մի խանութ, բայց ելի այդ թղուկ ընկերութիւնները կարողացել են այնպիսի հաստատուն ու ուժեղ միութիւն կազմել, վոր այդ միութիւնն իր շրջանառութեամբ ու հենց իր արտադրութիւնների բազմազանութեամբ բոլոր միութիւնների մեջ յերկրորդ տեղն է բռնում Մեծ-Բրիտանիայից (Մնգլիայից) հետո: Գերմանիայի, Ավստրիայի, Ֆրանսիայի—այդ բոլոր յերկրների առաջը Դանիան կտրել է, թեյեվ 3 միլիոն 2 հարյուր հազար ժողովուրդ ունի ընդամենը: Իսկ դա նրանից է առաջ յեկել, վոր դանիական սպառողական ընկերութիւններն իրենց միութեան հետեւը սարի պես են կանգնում ու ինչ ապրանք վոր կարելի չէ իրանց միութեան մեջ ճարել, միմիայն իրանց միութեանից են առնում, լավ իմանալով, վոր «ուժը միութեան մեջ է»: Իսկ միութիւնն ել ամեն կերպ աշխատում է ընկերութիւնների բոլոր կարիքներին կատարյալ բավարարութիւն տալ. նա շատ զանազան գործարաններ ունի, ուրիշ բաների հետ սերմ ել է ծախում. ով վոր միութիւնից է սերմ առնում, կարող է վստահ լինել, վոր առաջին տեսակի ապրանք կստանա: Սերմերը փորձելու և լավացնելու համար միութիւնը սեփական գյուղատնտեսական փորձնական կայան ունի: 1910 թվականի ցուցահանդեսում միութիւնն ստացել է իր սերմերի համար առաջին շքանշանը (մեդալը):

Այդ բոլորը միասին Դանիային այն տեղն է հասցրել, վոր մի հիսուն տարում նա անճանաչելի է դարձել: «Ուժը միութեան մեջ է» լոգունգը յեթե ուղիղ հասկանանք ու ուղիղ գործադրենք, իսկապես վոր մեծ ուժ կա թագնված, ինչպես և հեղափոխութեան «Բոլոր յերկրները պրոլետարներ, միացե՛ք» լոգունգի մեջ:

Ահա թե կոոպերացիայի աշխատանքից, ամբողջ ազգաբնակչութեան կոոպերանալուց ինչ հետեւանքներ եր սպասում ընկ. Լենինը:

«Հիմի,—ասում է նա,—մենք պետք է ընդունենք և գործ դարձնենք, վոր ներկայումս այն հասարակակարգը, վոր մենք պետք է պաշտպանենք սովորականից ավելի, դա կոոպերատիվ հասարակակարգն է, և պետք է պահպանենք այնպիսի «կոոպերատիվ» շրջանառութիւն, վորի մեջ իսկապես մասնակցում են ազգաբնակչութեան իսկական մասսաները (զանգվածները, մեծ մասը):

«Չպետք է մոռանալ,—շարունակում է ընկ. Լենինը,—վոր մեր հասարակակարգի առանձնահատկութեան շնորհիվ կոոպերացիան մեզ մոտ միանգամայն բացառիկ (ուրիշներին տարբեր) նշանակութիւն է ստանում»:

«Մեր անելիքն այն պիտի լինի, վոր գյուղացիները համար քաղաքակրթական գործ կատարենք: Իսկ գյուղացիութեան մեջ կատարվելիք այդ գործի տնտեսական նպատակն ել հենց կոոպերացիան է: Հենց վոր կատարելապես կոոպերացիան, մենք արդեն յերկու վոտով կը կանգնենք սոցիալիստական հողի վրա»:

Ահա այն խոսքերը, վոր պետք է հալի՝ ականջն ածի ամեն մի գյուղացի, յեթե իր ժողովրդի լավն է ուզում, և ահա այն ճանապարհը, վորով այսուհետեւ պետք է գնա գյուղացիութիւնը պետական և իր սեփական կյանքի շինարարութեան (լավացնելու) մեջ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կոոպերացիան գյուղում . . . . .	62.
Կոոպերացիայի նշանակութունը գյուղի համար . . . . .	3
Գյուղական կոոպերացիայի զլխավոր տեսակները . . . . .	5
Գյուղական սպառողական կոոպերացիա . . . . .	9
Գյուղատնտեսական կոոպերացիա . . . . .	22
Վարկային և փոխ-խնայող ընկերությաններ . . . . .	34
Գյուղական արտադրական կոոպերացիա . . . . .	44
Ընկ. Լենինն ինչ է ասում հիմնկվա կոոպերացիայի մասին . . . . .	53




## Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Գրքի մեջ մեացել են բազմաթիվ սպագրական սխալներ, վորոնցից ամենակարեկորները մասնաճում ենք:

Եջ:	Տող:	Տպագրված է	Պետք է լիքի
		<b>ԲՄ.Ճ.Ն</b>	<b>ԲՄ.Ճ.Ն</b>
1	2	միջ	մեջ
4	25	թվերից ստեղծել	թվերից, ստեղծել
5	5	միշտ իր	հեշտ իր
6	22	զբաղմունքների	զբաղմունքների
7	3-4	բառում	բանում
9	24	արորներ	արորներ,
»	30	ինչ	ինչ,
10	13	թե	թե
11	20	կնկնի	կընկնի
13	10	չնկած	չընկած
»	16	ուղարկին	ուղարկեն
14	3	լինում	լինում,
»	17	պարտ	պարտք
15	4	դործերը	գործերը,
»	14	ուղիղ	ուղիղ
16	1	ֆուս	ֆուս,
»	11	տանում	տանում,
»	33	հաշիվները	հաշիվները:
17	7	անդամների	անդամների
»	17	չնկնել	չընկնել
18	19	պարբտ	պարտք
»	22	համեմատ	համեմատ,
»	25	չնկնելով	չընկնելով
»	29	կոոպերատիվ:	կոոպերատիվ):
19	19-20	գործվածքներ	գործվածքներ
20	12	քաղաքի ինք	քաղաքի ինք-
»	15	պահպանել	պահպանել,
»	24	քաղաքացիները	քաղաքացիները
22	5	(Յենտրոսոյուզ)	(Յենտրոսոյուզ)
»	13	(տաղացնելը)	(տաղացնելը)
»	24-25		

Եջ:	Տող:		
22	28	կյանքից	կյանքի
23	2	հավատալ	հավատալը
»	5	» 2	ուշ
»	19	շններն	շններն
»	30	ոռաջվա	առաջվա
24	17	ե վոր	և վոր
»	31	մինակ	մենակ
»	33	գալով	գալով՝
25	3	տնտեսութայն	տնտեսութայն
»	4	անել	անիլ
»	9	մասանգետ	մասնագետ է
»	16	տունը	տանը
»	20	առնիլ,	առնիլ.
26	8	սերմեր	սերմեր,
»	10—11	կտորները	կտուրները
»	17	ե	են
»	28	կոլլեկտիվին,	կոլլեկտիվին
»	30	նրանց	նրանց,
27	12	իրենց անդամների	իրանց անդամները
28	31—32	անասուններ, կեր	անասունների կեր
		բույսեր ցանելու նասին	բույսեր ցանելու մասին
29	16	համար	համար,
»	17	սիմինդ	սիմինդր
»	25	47.747	42.747
30	29	կղմենտրի	կղմինտրի
31	25	թե՛	թե
33	28	յե)	ե)
35	16	գարունքը	գարունքը,
36	13	վճարե	վճարեր
39	21	տասը, տարուց	տասը տարուց
»	28	չի	չեր
40	6	կախ	կախ-
»	12	ստուգել	ստուգիչ
»	13	քննել	քննիչ
41	9	շրջանական	շրջանական
»	17	»	»
42	17	հիշել	հիշել,

Եջ:	Տող:		
42	18	ընտրել	ընտրել,
43	24	յերաշխավրությամբ	յերաշխավրությամբ
»	31	դնելու ամենից	դնելու համար ամենից
44	6	վարչությանը թե՛	վարչությանը և թե՛
46	17	հարստությունը	հաստատությունը
48	22	կոոպերատիվների	կոոպերատիվների
»	24	4	5
»	30	5	6
49	13	6	10
»	27	7	11
51	1 2	գյուղատն-տեսական	գյուղատն-տեսական
»	8	(հարստության փողի)	(հարստության, փողի)
52	11	Շունգենի	Շունգայի
54	20	(ճանապարհ ե	(ճանապարհ ե
		ցույց տալիս այդ	ցույց տալիս) այդ
		պրոլետարիտը յեվայլն)	պրոլետարիտը յեվայլն,



1	2
3	4
5	6
7	8
9	10
11	12
13	14
15	16
17	18
19	20
21	22
23	24
25	26
27	28
29	30
31	32
33	34
35	36
37	38
39	40
41	42
43	44
45	46
47	48
49	50
51	52
53	54
55	56
57	58
59	60
61	62
63	64
65	66
67	68
69	70
71	72
73	74
75	76
77	78
79	80
81	82
83	84
85	86
87	88
89	90
91	92
93	94
95	96
97	98
99	100

«Ազգային գրադարան»



